

371.9
0-71

ՀԱՅԿԵՐԴ
ԱՌԱՋՎԱՔԱՆԱՌ
ԳՐԱԴԱՐԱՆ

109 XIII

Ա. Ե. ՕՍՏՐՈՎՍԿԻ

ԸՆՏԵՆԵԿԸ ՅԵՐԵԲԵՐԱԽԹԻՒՆԵՐՆ

ՈՒ

Ն Բ Ա Ն Ց Կ Ր Թ Ի Զ

ՆՇԱՆԱԿՈԽԹԻՒՆԸ

Թարգմ. Լ. Շ

371.9
0-71

Թ Ի Ց Լ Ի Ս
բար տպարան ՀԱՅՐՄԱՆ, Ա. Պ. Եղիգարեանի



~~371.9~~
0-71
W.

0720-30

«ՀԱՅՈՒԹ»-ի ՄԵՆԿԵՎԱՐԺԵԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ

370
2485-04

Ա. Վ. ՕՍՏՐՈՎՍԿԻ

XIII



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

ok

ՆՐԱՆՑ ԿՐԹԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

16000



Թ Ա Ֆ Լ Ի Ս
Ելեմանտար սպառան „ՀԵՐՄՈՒՇ“ Ս. Պ. Եղիկարեանի
1908

50.270

3 SEP 2013

11

կեանքի փորձը շատ վաղ է սկսում և ըստգրկում է մարդկային քույր յարաբերութիւնները, որոնց հասնում է երեխի զիտողութիւնը: Ըստանեկան տպաւորութիւնների արժէքը, երեխաների սիրուն մենք մեզ լաւ պէտք է հետեւնք:

Ի՞նչ ազդեցութիւն է անում երեխի վրա ընտա-
նիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնը, — ահա
զրգոյկիս նիւթը: Ես խօսելու եմ միայն մեծերի յա-
րաբերութեան մասին թէ դէպի մեծերը և թէ դէպի
անուկները: Ընտանիքի շանդամ հաշում եմ նաև ծա-
ռաներին, և մասնաւորապէս դայեակին: Հայրն ու
մայրը ընտանիքի մշտական անդամներն են և ուրոյն
կապերով կամլած իրար ու երեխաներին, իսկ ծառան
պատահական անդամ է ու ժամանակաւոր. սակայն
քիչ ընտանիք կը ճարւի, որ կարողանայ գլուխ հասել
առանց ծառայի, որ յաճախ երեխի կեանքում քիչ ա-
ւել կամ պակաս, բայց մեծ դեր է խաղում. և վերջա-
պէս հօրն ու մօր վերտարերումը դէպի ծառան արդէն
ինքնին տպաւորութիւն է անում երեխի վրա. այդ
պատճառով էլ ծառային չը յիշել անհնար է, երբ խօսքը
ընտանեկան յարաբերութեան մասին է: Իսկ ինչ վե-
րաբերում է երեխաների փոխադարձ յարաբերութեանը՝

լաւ է դրա մասին առանձին խօսւի *), այստեղ կը յիշեմ միայն խիստ ընդհանուր գծերով:

Նախ պէտք է լաւ աչքի առաջ ունենանք, որ երեխաների մտածումն ու հետաքրքրութիւնը բնաւ չի սահմանափակում այն շրջանակով, ինչ որ մենք երևակայում ենք, ենթադրելով, թէ մանկան աշխարհը իր հասակակիցներն են ու իր խաղերը: Ընդհակառակը. նրանք հետաքրքրում են մեծերով, փընտռում են մեծերի շրջանը, դիտում են, դատում ու իրանց պահանջները դնում: Ի հարկէ, մանկական է նրանց հետաքրքրուելն ու հարցուփորձը, մանկական է և նրանց դտողութիւնը, բայց դա կայ, և անհատական գծերի կողքին այդտեղ մի ընդհանուր բան էլ կարելի է գտնել, ինչպէս շուտով տեսնելու ենք: Երեխաների դիտողութիւնը չի վերջանում այնտեղ, որտեղ կանգ է առնում նրանց անմիջական շահը, ալ շատ աւելի լայն է: Օրինակ նրանց զբաղեցնում են այս տեսակ հարցեր, թէ հայրն ու մայրը ինչպէս են ապրում իրար հետ, թէ ինչ հասարակական դիրք ունի հայրը, թէ արդեօք սիրւած ու յարգւած են իրանց ծնողները, և այն: Ընտանիքի հասակաւոր անդամների կեանքը շատ վաղ է դնում իր կնիքը նրանց հոգու վրա, շատ աւելի վաղ, քան թէ նրանք սկսում են դիտակցել, որ արդէն կազմւած սովորութիւնների, պահանջների ու հաշակի տէր են, ունեն արդէն պատրաստ մտապատկեր-

ներ ու գիտակցութիւն: Հոգին ընդունում ու իւրացնում է տպաւորութիւնները յաճախ իրհամար բոլորովին աննկատելի կերպով. և հաւաքում է մի մտաւոր պաշար, որ միտքը աւելի ուշ պարզում է ու համոզիչ դարձնում: Ընտանեկան կեանքով ծնողները կրթում են, իսկ մանուկները կրթում, լինի այդ կեանքը դիտաւորութեան: Ընտանիքը կազմւած, թէ առանց դիտաւորութեան: Ընտանիքը կարող է ապրել սիրով, ուրիշներին էլ վերաբերել սիրով, բայց և կարող է կաւարար լինել, չար, չոր ու անլարեացակամ ոչ միայն կողմնակի մարդոց վերաբերմաժը, այլ և մերձաւորների: Ընտանիքը կարող է ապրել հոգեկան վայելքներով, սիրել ընթերցումը, նըկարն ու երաժշտութիւնը, կարող է և ամբողջովին կարող ու երաժշտութիւնը, կարող է և ամբողջովին կանոն լինել, կարող է լինել և կատարեալ անկարգութիւն: Այսպէս թէ այնպէս, ընտանեկան կեանքը հէնց դրանով էլ ուժեղ է, որ իր տպաւորութիւնները մըշտական են, առօրինակ ու ազդում են աննկատելի, ամբացնելով կամ թունաւորելով մաքղու հոգին, ճիշտ մեր ծծած օդի նման, որ ամբացնում կամ թունաւոր մեր ֆիզիկական կազմը: Զի կարելի ասել, որ ազնիւ ընտանիքում բոլոր երեխաները ազնիւ են մեր գործութիւնները, ու ամբացնում կամ թունաւոր մեր ծծած օդի նման, որ ամբացնում կամ թունաւոր մեր գործութիւնները բարի ընտանիքում բարի. յաճախ երեխան ստանում է մի հոգեկան կազմ, որ ճիշտ հակառակն էր լինելու, եթէ անխուսափելի կերպով իր ընտանիքին քաշելու լինէր: Բայց պէտք չէ մոռանալ երկու բան, նախ՝ այն, որ նոյն իսկ ամենաթունդ բո-

*) Տես «Հասկերի» գրադարան III «Մեծերն ու փոքրերը» տիկ. հսահակեանի, թարգմ. Ստ. Լիսիցեանի:

ղոքականների կեանքում միշտ նկատելի են այն սովորութիւնների հետքերը, որ մանուկ հասակում իւրացրել է նա, ապրելով մի այնպիսի միջավայրում, որի դէմ այժմ ինչն է բոլորում. այդ հետքերն են որ նրա համար դառնում են մի մշտական աղբիւր հակասութիւնների, անհետեղականութեան ու ինքնագրժողութեան. և երկրորդ այն, որ ընտանեկան տպաւորութիւնները զրեթէ միակ աղբիւրն են կազմում մեր մտածումների ու զգացումների այդ թարմ տարիքում, երբ մարդ ամենից աւելի տպաւորուղ է և նիւթ է հաւաքում ամբողջ կեանքի համար: Ընտանեկան տպաւորութիւնները կազմում են ամենաառաջին և ամենից աղղեցիկ մնունքը, որ ստանում է մարդկային հոգին:

Հստ երեսոյթին, բոլոր ընկերական կապակցութիւններից ամենից աւելի հեշտ ընտանիքն էր դառնալու մի մարմին, որից նրա բոլոր անդամները պիտի միայն օգուտ տեսնէին: Զէ որ նա կազմւում է աղատ կամքով, աղատ ընտրութեամբ և վերջն էլ ամրանում է շահերի, ճաշակների և կարիքների ընդհանուր լինելովը: Այնքան շատերին փչացնող «գոյութեան կոիւը» չը պիտի տեղի ունենար այստեղ: Ոչ մարդը պէտք է նեղւածք զգար կնոջ կենակցութիւնից, ոչ էլ հակառակը: Ընտանեկան կեանքը մինչև մի որոշ աստիճան կարելի է սարքել իր ճաշակի համեմատ և այդտեղ հանգիստ գտնել հասարակական կեանքի հոգսերից, վիրաւորանքներից ու անաջողութիւններից: «Լաւ կնկայ հետ վիշտը կէս է, ուրախութիւնը կըկին» ասում է առածը:

Բայց դժբախտաբար իդէալական ընտանիքը հաղ-

ւագիւտ է: Այս հարցի շուրջը բարոյախօսել աւելորդ է այստեղ:

Մանկավարժական զրքեր կարդացող մարդու մէջ մենք արդէն ենթակցում ենք այն գիտակցութիւնն, թէ մեծերը պարտաւորութիւններ ունեն դէպի փոքրերւ: Բայց և այն մարդը, որ ցանկանում է կատարել իր պարտաւորութիւնը երեխանների վերաբերմամբ, կարող է սխալւել, կարող է չըմբռնել այն տպաւորութիւնը, որ մենք անում ենք փոքրերի վրա: Ինքն իրան հետևելը հեշտ բան չէ, դրա համար էլ այս գրքոյկի մէջ բերում եմ այդ խնդրի մասին արած իմ մի քանի վիտողութիւնները: Առայժմ այսքանն ասեմ, որ ամեն անգամ, երբ մենք՝ ծնողներս զալում ենք մեր մէջ մի որևէ վատ գրդում երեխանների սիրուն, մենք միայն մեր պարտքն ենք կատարում: Երեխան անպայման նկատում է ծնողների կատարած այդ ձիգը, և թէև այդ տարիքում գուցէ գեռ պարզ զլխի չի ընկնում, բայց նկատում է, զնահատում և վարժում է ինքն էլ իր վատ կողմերը զավելու, իր սանձը պահելու, նախ անզիտակցօրէն ծնողներին նմանւելով, վերջն էլ համուշած, իսկ սա արդէն կրթական մի շատ խոշոր իւրացում է:

II.

Առաջւան ընտանեկան կեանքը: Հասարակական կեանքի կրած փոփութիւնը ընտանեկան կեանքումն էլ փոփոխութիւն է առաջարի: Շանչերի տարբերութիւնը և ամեն մէկի իր առանձին բախտաւորութիւնը: Ընտանիքում «երրորդ անձին երեւալը և մանկան տպաւորութիւնները»:

Վերջին 40—50 տարիների ընթացքում մեր աւելի կուտուրական շերտերի ընտանեկան կեանքը զգալի

փոփոխութեան է ենթարկւել: Առաջ ընտանեկան կեանքը՝ աւելի շատ էր ու աւելի քիչ էր զրսի իրարանցումը: Դեռ նոր մեռած, նոյնիսկ դեռ ապրող գործիչների մասին խօսելիս յաճախ յիշատակւում է թէ Նրանց մանուկ օրերի ընտանեկան կեանքը պարզ ու նահապետական է եղել: Առաւոտը հայրն անց էր կացնում գործի վրա, իրիկունը նւիրում էր ընտանիքին: Յաճախ ծնողներն իրանք էին տալիս սկզբնակտն գիտութիւնը իրանց երեխաներին, աղջիկներն օգնում էին իրանց մօրը տան տնտեսութեան մէջ կամ փորբիկներին խնամելիս. ճաշին ու թէյին հաւաքւում էր ամբողջ ընտանիքը, սկսում էր ընդհանուր խօսակցութիւն. երբ երեխաները իջնում էին պարտէզ խաղալու, յաճախ իջնում էր և հայրը նրանց խաղին մասնակցելու: Այս բոլորը շատերին առիթ են տւել պընդիլու, թէ առաջ կեանքը աւելի լաւ էր, բայց խնդիրն այդ չէ. հին ընտանեկան կեանքը յիշեցի միայն նրա համար, որ ցոյց տամ թէ առաջ երեխաները աւելի էին վայելում իրանց ծնողների ընկերակցութիւնը, թէ ընտանեկան շրջանակը աւելի սերտ էր և ամենքը ապրում էին մի ընդհանուր կեանքով: Փոխւեցին հասարակական կեանքի պայմանները, փոխւեց և ընտանեկան կեանքը: Ընտանիքը կերակրելն ու ոտի կանգնացնելը դժւարացաւ. այժմ ակամայ ստիպւած ենք աւելի աշխատելու և աշխատանքի ենք յատկացնում ժամանակի այն մասն էլ, որ մեր հայրերը նւիրում էին ընտանիքին: Բնական է որ յօդնած, երբեմն ուժասպառ հայրը, երբ տուն է վերադառնում հանգստա-

նալու, գալիս է գրգուած և ընաւ տրամադիր չէ երեխաների հետ գլուխ գնելու: Հանրային կեանքը աճել է և մեզ՝ ից շատերը «հացի աշխատանքից» ջոկ, ահազին քանակութեամբ էլ ձրի հասարակական աշխատութիւններ են կատարում: Կեանքը գարձել է աւելի բազմահոգ, աւելի ջղային ու աւելի լարւած: Բացի զրանից մարդ պահանջ է զգում քիչ զւարձանալու, գնալու թատրոն, դասախոսութեան, նւագահանդէսի: Միւս կողմից հանգիստ չի տալիս երեխաների ապագան պէտք է կրթել, պէտք է լաւ քննութեան պատրաստել, որովհետև ուսումնարան մտնելու քննութիւնները այժմ շատ դժւարացել են. տեղ չը կոյ դպրոցներում և բաւարար պատրաստածներին անգամ մերժում են. ուրեմն պէտք է պատրաստել երեխին մի մասնագէտի ձեռքով, որը լաւ իմանայ թէ այս ինչ դպրոցում քննութեան ժամանակ ինչ են պահանջում: Երեխին դպրոց տւիր թէ չէ, սկսում են նոր բարդութիւններ ընտանեկան կեանքում: Սովորողին պէտք է մի անկիւն, նոյնիսկ մի սենեակ, որպէսզի միւսները չը խանգարեն նրան, որտեղ սերտի ու սերտի իր դասերը և պատրաստի գրաւոր աշխատանքը: Արդէն անկարելի է զարձել այն երջանիկ իդիլիան, ուր միւսնոյն սեղանի շուրջը հայրը կարգում է իր լրագիրը. մայրը կարում է մի բան, իսկ երեխաները նկարում են կամ հին տուփերից ու տնային իրերից խաղալիքներ են շինում: Ամբողջ ընտանիքը հաւաքել թէյի սեղանի շուրջը՝ այժմ այդ անգամ անկարելի է. մէկը ժողով ունի, միւսը պիտի գնայ ընկերոջ հետ պարապելու,

երբորդը գնալու է գիմնազիա գրական երեկոյթի կամ օրկեստրի: Մի խօսքով, կեանքը քաշում է բոլորին ընտանիքից դուրս, և ընտանելան կապերին ու շահերին համեմատարար քիչ նշանակութիւն ու տեղ է թողնում: Զարմանալու բան չէ, որ այս պայմանների մէջ ընտանիքի ամեն մի անդամը, սկսած հօրից ու մօրից, ունենում է իր շահերը, իր ընտրեալներն ու բարեկամները, իր շրջանը, իր «բախտաւորութիւնը»: Եւ այսպիսով նւազում է ծնողների ու երեխաների փոխադարձ շփումը: Այդ շփումը այժմ հնարաւոր է լինում միայն վաղ մանկութեան ժամանակ, իսկ յետոյ՝ 10—12 տարեկանից սկսած երեխաները ենթարկում են յախուռն արտաքին ազդեցութեան և նրանց մանկութիւնից դէպի պատանեկութիւն անցնելու խիստ կարեոր շրջանը յաճախ վրիպում է ծնողների ուշադրութիւնից ու դիտողութիւնից: Երեխին սրտակից լինել, քանի փոքր է, գեր կարելի է. վերջը արդէն այդ շատ աւելի դժւար է գառնում, և այսուել յաճախ կարելի է ամեն տեսակ անակընկալների հանդիպել, ինչպէս օրինակ՝ վատ ընկերների ջնորհիւ այնպիսի ձգտութեարի ու հակութների, որոնց գուք չէք համակրում և այլն: Այս անակնկալները նրանով մասաւանդ աւելի հնարաւոր են, որ մեր երեխաների կեանքը ընտանիքի հետ սերտ կապեր չունի, որ մենք նրանց հետ ապրում ենք յաճախ միայն արտաքուստ, մեծ մասամբ առանց գիտենալու թէ ինչ է կատարում նրանց հոգում, ինչով են որպանք հետաքրքրում, ինչով են ապրում: Ամեն մէկը

վարում է իր ուրոյն կեանքը, որի արմատները ընտանիքից դուրս են:

Մրանից գուլս պիտի գա հետեւեալ եզրակացութիւնը. բացի այն ընդհանուր արժէքից, որ ունեն կեանքի առաջին տարիներում ստացած տպաւորութիւնները, և որ մեզ մատնացոյց է անում հոգեբանութիւնը, այդ առաջին տպաւորութիւնները մեր լուրջ ուշադրութեանն են արժանի և մի ուրիշ կողմից. կեանքի արդի պայմանների մէջ մանկութեան առաջին շրջանը այն միակ ժամանակն է, երբ մեր ու երեխաների յարաքերերութիւնը սերտ է, երբ աւելի լրիւ է դաստիարակումը, երբ մեր նրանց վրա ունեցած ազդեցութիւնը աւելի ամբողջական է: Անտարակոյս, լաւ ընտանիքներում այդ ազդեցութիւնը շարունակում է եյտոյ, միայն աւելի թոյլ, քանի որ մէջ են գալիս աննախատեսնելի հանգամանքներ. և յամենայն դէպս զա լինում է արդիւնքը նախորդ տարիներում մեր ձեռք բերած ազդեցութեան:

Մինչև հիմա մենք աչքի առաջ ունէինք լաւ ընտանիքը, իսկ այնտեղ, ուր ներքին պառակտումներ են տիրում, ընտանիքը այնպէս է քափայլում, որ այդնկատելի է դառնում ոչ միայն պատանիների, այլև մանուկների համար:

Մի վէպի պատանի հերոսը 2—3 տարւայ բացակայութիւնից յետոյ հայրենի տունը վերադառնալով՝ տեսնում է, որ հայրն ու մայրը թէն ապրում են միասին, բայց ամեն մէկը զրազւած է «իր ուրոյն կեանքով», իր ուրոյն բախտաւորութեամբ»: Ահա այսպէս է

արտայայտում նա իր կրած տպաւորութիւնը. «Սա ընտանիք չէ, այլ պարզ հիւրանոց, ուր պատահական մարդիկ ապրում են կից սենեակներում և ճաշի ու ընթրիքի ժամանակ միասին գալիս: Իսկ մենք՝ երեխաներս ինչպատճեղ, ինչ գեր ենք խաղում: Եւ ինչո՞ւ էին մեզ այսքան տարիներ խարում. իթէ ընտանիքը գոյութիւն չունի, մեզ պէտք է մանուկ հասակից այդ մտքին վարժեցնէին: Գոնէ այսպէս զգայուն և սանտիմենտալ չէի լինի ու սիրոյ թևեր առաջ տուն չէի թռչի»:

Վիրաւորւած ու գրգռւած այդ պատանուն ցաւ է պատճառում իր զգայուն և սանտիմենտալ լինելը, սակայն այդ սանտիմենտալութիւնը ընդհանուր է ու բնական ամեն տարիքի երեխաների համար, նոյնիսկ բոլորովին վորքիկների: Երեխան, իրեւ մի բոլորովին անօգնական էակ, այնքան շատ բան է ստանում իր ծնողներից, որ բնական կերպով սէր, երախտագիտութիւն և մի տեսակ հապարտութիւն է զգում իր հօրն ու մօր վերաբերմամբ: Ոչ միայն ծնողների հոգատարութիւնն ու ինամբը, այլև նրանց գորովն ու զըդւանքը գեր են խաղում այստեղ: Ծնողներից վաղ որբացած կամ զրկւած երեխաները հասուն տարիքում ցաւ ու թախիծ են զգում, որ չեն ունեցել հօր ու մօր գուրգուրանքը, ընտանիքի ուրախութիւններն ու որդիական զգացումները: Եւ ընդհակառակը, նրանք, որոնք վայելել են քիչ-շատ լաւ ընտանեկան կեանքի տւած բախտաւորութիւնը, յիշում են որ իրանց մօրը համարում էին գեղեցկուհի ու անչափ բարի, իսկ

իրանց հօրը՝ խիստ խելօք ու իմաստուն, թէկ հիմա որ յիշում են՝ արդէն կարող են ասել, որ մայրն իսկի գեղեցկուհի չէր, հայրն էլ պարզապէս միայն յիմար մարդ չէր: Մանկութեան այդ տարիքը, այն էլ շատ փոքրուց, պահանջ ունի իր սիրելի ու թանկագին էակների մէջ տեսնելու այն ամեն տեսակի յատկութիւնները, որ իր երեսակայութիւնը կարողանում է նկարել: Երեխան մէշտ սիրում է բոլորին, ով սիրում ու յարկում է նրա ծնողներին: Եւ երբ ծնողները իրօք ունենում են խոշոր արժանիքներ և երբ երեխաները տեսնում են իրանց ծնողների առաջ ամենքի ցոյց տւած յարգանքն ու երախտագիտութիւնը, նրանց վրա այդ գրեթէ միշտ մեծ աղղեցութիւն է անում, որ և մնում է ամբողջ կեանքում, յաճախ էլ որոշում է երեխի ապագայ բնաւորութիւնն ու գործունէութիւնը:

Այն ընտանեկան երկպառակութիւնների ժամանակ, որոնք առաջանում են, երբ ամուսնու ու կնոջ մէջ երեխան է գալիս մի «երբորդ անձ», մի սիրեկան, նորից աչքի է ընկնում շուտ, որ երեխաները պահանջ ունեն սիրոյ ու զգւանքի և որ աղոտ կերպով զգում են հօր ու մօր վրա իրանց ունեցած իրաւունքը: Երեխաները այն տարիերում իսկ, երբ դեռ գլխի չեն ընկնում, թէ այն տարիերում է, նորից թշնամաբար են վերաբերում այդ երբորդ անձին, իրեւ իրանց իրաւունքները խլող մէկին, իրեւ սիրյափշտակողի մօր կամ հօր այն ժամանակը, այն սէրն ու ինամբը, որ իրանց, երեխաներին պիտի պատկանէր: Իսկ աւելի ուշ հասակում նրանք կամ գատաւոր են կանգնում, կամ դժբախտ մարդիկ են

դառնում: Երեխաների ու պատանիների մէջ խիստ ուժեղ է իրանց ծնողները բարոյապէս մաքուր տեսնելու պահանջը: Դէպէքեր են եղած, որ պատանիները ինքնասպաննեն եղել, երբ իմացել են, թէ ապօրինի զաւակ են և թէ իրանց մօր վրա արատ կայ: Ես մի դէպէք զիտեմ այդ տեսակի ինքնասպանութեան, որի կատարողը 11—12 տարեկան մի մատսղահաս տղայ էր: Տղան քնքուշ սիրով սիրում էր իր մօրը. երբ գիմազիա է մտնում, ընկերները առանց այլկայլութեան յայտնում են նրան, թէ ինչ համբաւ է վայելում իր մայրը: Տղան սկսում է գիտել, տեսնում է, ինչ որ առաջ չէր նկատում, հասկանում է, ինչ որ առաջ չէր հասկանում, և չի կարողանում տանել աղ տանձանքը, թէ իր սիրելի մայրը մի վատ կին է կոտրւած անունով:

Ժամանակակից վիպագիրները յաճախ բոլորովին ուրիշ պատկեր են տալիս, թէ ինչ տպաւորութիւն է անում երեխաների վրա իրանց ծնողների սիրեկան կամ սիրուհի ունենալը: Հայրը կապեր ունի մի օտարազդի աղջկայ հետ և ահա որդին ինչպէս է դատում: «Մայրս ջղային է ու հիւանդոտ. նրա հետ ձանձրանում է հայրս. այդ կինը չը լինէր, պիտի լինէր մէկ ուրիշ... իսկ նա ինչպէս խելօք է, ինչպէս ամեն բան հասկացող, սիրուն, թարմ և ճաշակաւոր. ի՞նչ կայ. հօրս կարելի է միայն նախանձել: Ինչպէս էլ տակտով է և չի ուզում երբէք խառնւի իրան չը վերաբերող գործերի մէջ»:

Հասկանալի է, որ հասարակութեան սանձար-

ձակ կեանքը պիտի բթացնէր պատանեկան նըրապազգացութիւնը նաև իր ընտանիքի մէջ կատարւածների նկատմամբ: Բայց և այնպէս պէտք է ընդունենք, որ անտարբերութեան այս մի ծայրայեղութեան հետ կայ և միւս ծայրայեղութիւնը, հիւանդագին նըրագացութիւնը գէպի իր հօրն ու մօր անաղարտ անունը, որ ինքնասպանութեան է հասցնում, երբ այդ անունը արատաւորում է. և այս երկու ծայրահեղութիւնների մէջ հազար աստիճանաւորումներ կան դեռ: Երեխաները այս տեսակ դէպէքերում կարող են բոլորովին զանազան զիրք բռնել՝ նայելով իրանց ընաւորութեանն ու այն հանդամանքներին, որ առաջ են բերել ընտանիկան այդ պառակտումը: Բայց մեզ համար հետաքրքիրն այն է, որ նոյն իսկ շրջապատի անտարբերութիւնից վարակւած այդ անտարբերների մէջն անգամ զարթնում է սովորաբար իրանց ծնողների մաքուր անւան նախանձափնդիր լինելը, երբ յանկարծ մի որևէ «հըրորդը» մտնում է ընտանիք և առանց այլեայլութեան զարթեցնում է այդ զգացումը:

III.

Ընտանեկան պառակտումներ և երեխի հոդին:

Արդէն ասացի, որ սերտ ու մտերիմ ընտանիքը, այնպէս ինչպէս իգէալն է ներկայացնում, խիստ հազւագիւտ է: Պատճառները շատ են ու զանազան՝ նայած ամեն մի մասնաւոր դէպէին, և դրանց մասին խօսելն էլ այստեղ աւելորդ է, քանի որ մեզ զրաղեցնողը այն

աղիեցութիւնն է միայն, որ անում են ընտանեկան այդ խոռվութիւնները երեխի հոգու վրա:

Մեզնից շատերը կարծում են, որ երեխաների համար անըմբոնելի են այն տեսակ երևոյթները, ինչպէս է մեծերի փոխաղաքարձյարաբերութիւնը: Այդ կարծիքը գուցէ և ճիշտ է, եթէ աչքի ասաջ ունենանք լրիւ դիտակցական բմբանումը, բայց սիալ է, եթէ աչքի առաջ ունենանք երեխաների զիտող լինելը և անմիջական եղրակացութիւններ հանելու ընդունակութիւնը: Մի գրագէտ, որի առաջ շատ վաղ էր բացւել իր ծընողների մէջ և զած անհամերաշխութիւնը, այդ առթիւ հետեւալ նկատողութիւնն է անում: «Երեխաները ընդհանրապէս շատ աւելի խորաթափանց են, քան ենթադրում ենք. նրանք շուտ են ցրւում, մի առժամանակ մոռանում են, ինչ որ նրանց զարմացրել էր, բայց յամառութեամբ դառնում են դրան նորից, մանաւանդ եթէ երևոյթը խորհրդաւոր է ու սարսափելի, և զարմանալի ճարպիկութեամբ ու յամառութեամբ փորփրում են, մինչև համանեն ճշմարտութեամը»: Նրա հօրն ու մօր մէջ յաճախ ընդհարումներ էին տեղի ունենում. տղան շատ անգամ լինում էր ներկայ, բայց այդ բոլորը բնական էր համարում: Նա վարժւել էր, որ տանը ամենքը վախում էին հօրից, որ հայրը բոլորին նկատողութիւններ էր անում, նրանց թւում նաև մօրը: Մինչեռ տան ծառաները անչափ սիրում էին մօրը, իսկ հօրը զատապարտում: Մի օր տղան լսեց իր դաշտակի նկատողութիւնը, թէ մայրը վաղուց թողած ու հօր տունը գնացած կը լինէր, եթէ չը լինէր երեխան:

Այս խօսքերը ընկան երախի հոգին: Հ/Տ Միջանգագում
որ ականջներս սրբցի, ասում է. ՍՅԱՀԱԿԱՎՈՐ ԱՊՈՒՀԱՅԱԳԱՅԱ
քանի շաբաթւայ ընթացքում մատքական օթիկացացայ
թէ ուր և ինչպէս էին հայրս ու մայրս իրար հասդի-
պել, ինչպէս էր փախել մայրս հայրենի տնից և այն.
և այս բոլորը իմացայ առանց ոչոքի որ և է հարց
տալու: Այն ընդհարումները, որ առաջ բնական էին
թւում, այժմ ուրիշ գոյն են ստանում: «Այն սիրը,
որ այդ բոլորի մի մասը մայրս տանում էր իմ պատ-
ճառով, երբեմն գտլիս սկ ու ծանր ամպի նման պա-
տում էր իմ մանկական պայծառ երեսկայութիւնը:
Երկրորդ միտքը, որ այդ օրից արմատ էր զցել մէջս,
այն էր, թէ ես շատ աւելի քիչ կախում ունեմ հօրիցս,
քան ընդհանրապէս ուրիշ երեխաները: Եւ այդ ինքնու-
րոյնութիւնը, որ ինքս էի հնարել, ինձ գուր էր գա-
լիս»:

Եթէ ընտանիքը անօրմալ է, այսինքն եթէ մօրը փո-
խարինում է մի խորթ կամ մի մեծ մայր կամ մի ուրիշը,
ընտանեկան խոռվութիւնները աւելի սուր կերպարանք
են ստանում և երեխաների վրա էլ աւելի ուժեղ տպա-
ւորութիւն անում: Եւ այդ աւելի ուժեղ տպաւորու-
թեան շնորհիւ աւելի պարզ էլ արտայայտում է երեխա-
ների մէջ գոյութիւն ունեցող ընտանկելան կեանքի պա-
հանջը, գգւանքի ու խնամքի պահանջը, այլ և ծնողների
հանդէպնանց ունեցած մի տեսակ իրաւունքի զգացումը,
յետոյ նրանց ձգտումը ոչ միայն սիրելու, այլ և յար-
գելու իրանց հայրն ու մայրը, զանազան կատարելու-
թիւններ տեսնելու նրանց մէջ և պէտք եղած դէպքում

նոյն իսկ իդէալացնելու։ Անշուշտ, նոյն պահանջը ըգրում են երեխաները նաև ընտանեկան հօրժալ կաղմի մէջ, այսինքն երբ տանը հայր էլ կայ, մայր էլ կայ։

Բայց որպէսզի ընտանիքը նօրմալ դառնայ, հերիք չէ միայն, որ այստեղ հայր ու մայր լինի. պէտք է նաև որ նրանց փոխագարձ յարաբերութիւնները համապատասխան լինեն մարդկային այդ ամենասերտ կապակցութեան գաղափարին, և ոչնչով չը վիրաւորեն երեխի զգացումը։ Երեխի համար հաւասարապէս պէտք են ու թանկ հայրն էլ, մայրն էլ, և անհրաժեշտ է որ նա տեսնի ու զգայ ծնողների փոխադարձ սէրն ու յարգանքը։ Եթէ չը կայ այդ յարգանքը, եթէ չը կայ մտերիմ յարաբերութիւնը, երեխան այսպէս թէ այնպէս զգում ու նկատում է, որ հօրն ու մօրը մէջ մի բան կայ, և շատ շուտ կարող է իրան հարց տալ, թէ ումն է յանցանքը և մի՞ է արդար։ Յայտնի է, որ սովորաբար մեծերն իսկ յանձն չեն առնում դատաւոր լինեն մարդ ու կնկայ մէջ, այն աստիճան դժւար է նրանց մէջ տեղի ունեցող թիւրիմացութիւնների պատճառները գտնելը։ Ուրեմն որքան աւելի վեր է այդ խնդրի լուծումը երեխաների ուժերից. ոչ միայն վեր է նրանց ուժերից, այլ և մի ծանր և այրող խընդիր է նրանց համար։ Ի հարկէ, երեխաներն էլ մեծերի նման տարբեր բնութեան տէր են լինում, բայց կարծեմ աւելի շուտ իրեւ մի կանոն, քան մի բացառութիւն, պէտք է նկատել այն, որ երեխաները պահանջ են զգում իրանց ծնողներին սիրելու, նրանց լաւ ու ազնիւ համարելու. և երեխի համար շատ ծանր

է համոզւելը, որ իր հայրը կամ մայրը վատ մարդ է, որ հայրը կարող է մօրը վշտացնել, կամ ընդհակառակը, և որ ծնողներից մէկը հայհոյում է, միւսը լալիս և այլն։ Կենսագրութիւններ կարգալիս յաճախ հանդիպել եմ այնտեսակ յիշատակութիւնների, թէ ոչ միայն ծնողների կոիւները, այլև նրանց անտարբերութիւնը երեխաների նկատմամբ առաջ է բերում նրանց մանուկ հոգում մենակութեան ու սառնութեան զգացումը. մի զգացում, որ այդ ժամանակ դեռ չի գիտակցում, և արտայայտում է նրանով, որ երեխան կողմնակի մտերմութիւններ է որոնում, օրինակ ծառաների հետ, կամ իրան տալիս է ընթիրցանութեան գեռշատ կանուխ. իսկ յետոյ այդ մենակութիւնը գիտակցում է և գառն յիշողութիւններ է զարթեցնում։ Այդ կենսագրութիւնների մէջ քանի քանի անգամ կարգացել եմ և որդիական սիրոյ զեղումներ, չը նայելով որ հայրը կամ մայրը վատ են վարելիս եղել երեխի հետ, անարդար են եղել, խստասիրու ու շատ են վիրաւորել։ Այս բոլորն ահա ասում են, որ հօրն ու մօր մէջ եղած տարածայնութիւնը միայն նրանց չի վիրաբերում, այլ նշանակութիւն ունի և երեխաների համար, որոնք պարզ հանդիսատեսներ չեն միայն այդ բոլոր կատարւածի, այլ իրանը էլ են շահագրգուած, և շահագրգուած են իրան մէջ չափերով։

IV

Ծնողների միասին աշխատանքը և աշխատանքի բաժանումը

Դեռ հնագոյն ժամանակներից ընտանեկան կեանքը այնպէս է կազմւել, որ ծնողական պարտաւորու-

թիւնները բաժանւել են հօրն ու մօր մէջ, և բաժանւել են անհաւասար կերպով։ Երեխաններին խնամելը, ինչպէս և նրանց նախնական կրթութիւնը ընկնում է մօր վրա։ Նախ որ նա աւելի ժամանակ ունի երեխաններին նւիրելու, քան հայրը, երկրորդ էլ սովորութեամբ արդէն վարժւել է, իսկ իր բնութեամբ դործի մէջ աւելի քնքշութիւն է մտցնում, աւելի գգւանք, վափկութիւն և ուշաղրութիւն։ Փոքը երեխի կեանքին այդպէս մօտիկ լինելուցն է կախւած մօր բարոյական ազդեցութիւնը երեխի առաջին տարիներում։

Բայց տարիների հետ այս անմիջական խնամք-
տարութիւնը կորցնում է իր առաջնակարգ դիրք: Երե-
խաները սկսում են աւելի անկախ դառնալ, բնաւորու-
թիւնները քիչ-միշ որոշում են, և թէև դեռ միշտ կա-
րիք ունեն ծնողների ու չափահանների օգնութեանը,
բայց նրանց որոնածը այլևս բացառապէս նիւթական
նեցուկը չէ:

Ուզում են սի հէքիաթ լսեն, սիրում են զրից անեն,
հարցեր են տալիս կամ իրանք են մի բան պատմում,
և մէջ են դալիս խաղերն ու զբաղմունքները: Երեխա-
ները անհատականնում են: Մէկը այն տեսակ ճաշակ
ու հակումներ է ստանում, որոնց աւելի հայրը կարող է
բաւականութիւն տալ, միւսը ընդհակառակը: Հետզե-
տէ նրանք ձեռք են բերում իրանց սեռին յատուկ
գծերը: Եւ արդէն նշանաւում են բնաւորութիւնները,
նստակեաց ու մտածեու կամ աշխուժ ու անդադրում,
հանգիստ ու զգայուն, հեզ կամ կատակասէր: Մէկի
վրա աւելի լաւ հայրն է ազդում, միւսի վրա մայրը,

որովհետև այդ յարաբերութիւնների ժամանակ ար-
տայայտում է մածերի բնաւորութիւնը, հոգեկան
կազմը, հակումը, որ չի կարող նոյնը լինել հօր ու
մօր մէջ: Եթէ միայն ժամանակը աչքի առաջ ունե-
նանք, մայրը առաջւայ պէս աւելի շատ է լինում երե-
խանների հետ իսկ ինչ վերաբերում է գործի էութեանը,
հօր ազգեցութիւնը կարող է և հաւասար լինել և աւե-
լի, թէև նա աւելի քիչ է լինում երեխանների հետ:
Այստեղ բանը ժամանակի տևողութեան մէջը չէ, այլ
այն ազգեցութեան, որ մարդ անում է նայելով իր
անձնական յատկութիւններին: Ուժեղ հայրը կարող
է երեխին այն տեսակ հոգեկան սուսնդ տալ, որով նա
կարող է սնաել և սենակ եղած միջոցին:

Հօր ու մօր ազգեցութեան բաժանումը բնական հրեոյթ է: Ոչ ոք չի կարող աւել տալ, քան այն, ինչ որ կարող է: Դիրա դէմ կուելն անկարելի է, ողբան աւելորդ, պէտք է շահագործել: Ո՞չ նախանձելը, ոչ վշտանալը այստեղ միտք չունի, որովհետև այդ գգացումներն անտեղի են, քանի որ երեսոյթը բնական է. մէկ էլ որ դրանից անպայման կառաջանան մանր ընդհարումներ և երեխի դէմ կը կանգնի այն հարցը, թէ ով է մեղաւորը այդ ընդհարումների մէջ՝ հայրը թէ մայրը: Եւ ինչՃւ, քանի որ երեխի հոգին կատարել լապէս կարող է թէ հօր և թէ մօր սէրը պարունակել. Նոյն իսկ եթէ մի քիչ աւելի հակւած լինի սրա կամ նրա կողմը՝ թոյլ կողմին գեռ միշտ բաւականաչափ բաժին մուռ է այդ սիրուց: Մյս երեսոյթի դէմ կուելը միենոյն է, թէ աւելի ուժեղ ազգեցութիւնը թոյլով

փոխարինել ուզենանք. աւելի լաւ է նրան շահագործենք: Իսկ շահագործել կարելի է միայն փոխադարձ ձեռնտը-
ւութեամբ, այնպէս, որ աւելի ուժեղ կերպով ազդողը
հնար եղածին չափ շատ օգուտ տալ կարողանայ, իոկ
աւելի քիչ ազդողը երեխաների հանդէպ չը պահի ի-
զուր իրան չը յարմարւող դիրքը:

Բայց այդ ձեռնտըւութիւնը չըպէտք է այնպէս ար-
տայայտւի, որ ծնողներից մէկը մի տեսակ «մեծ» դառ-
նայ: «Այս սպասի, հայրդ (կամ մայրդ) գայ, ասեմ
նրան, քեզ ցոյց կը տայ»: Այս կարգի խօսքերով ար-
տայայտւում է թուլութիւնը, որ թաք է կենում ուրի-
շի ետքը: Երեխի աչքին ծնողները պէտք է հաւասար
լինեն և երկուսն էլ լաւ՝ ամեն մէկը իր տեսակի: Թող
երեխաներն իմանան, որ ծնողներն ապրում են իրալ
հետ մտերիմ, հետաքրքրւում են երեխաներով, սիրում
են նրանց ու բարիք են ցանկանում: Բնականարար, եթէ
մօր բացակայութեան միջոցին երեխան մի չարութիւն է
արել, մայրը պիտի իրանայ, որովհետեւ հայրը կասի.
Բայց դա չը պիտի լինի, իրու գանգատ, իրու դիմում
աւելի մհծին, այլ պարզապէս մի տեղի կութիւն: Եւ
այն, ինչ որ ծնողներից մէկն սնում է, միւսը պէտք
չէ որ փոխի: Երեխան մի չարութիւն է անում, նրան
կանգնեցնում են, վերջացաւ. գրանով էլ միջնադէպը
պէտք է փակւի, նորից ետ գառնալը չարժէ: Եթէ ծը-
նողներից մէկի կարծիքով միւսը սիալ է գործել, թու-
լութիւն է ցոյց տւել, դրա մասին կարող են խօսել
առանձին, առանց իրանց անհամաձայնութիւնը խայ-
տառակ կերպով երեխի առաջ հանդէս հանելու: Իսկ ով

միւսի արածը նորից փոխում է ու «գրստում», յաճախ
ոչ թէ դիմացինի հեղինակութիւն է զցում, այլ իր
արածն է քննագատութեան ենթարկում, որ երբեմն
կարող է և իր օգտին չը վերջանայ:

Սրգէն ասացի, որ ծնողների ազդեցութիւն գա-
նագան լինելու պատճառները շատ են և կախում ու-
նեն մէկի ու միւսի բնաւրութիւնիցն ու բնութիւնիցը:
Բայց այդ բոլոր պատճառներից ամենից աւելի աչքի
ընկնողը սեռական տարբերութիւնն է: Յաճախ նկատ-
ւում է աղջիկների բնական հակումը դէպի մայրը, իսկ
տղաներինը դէպի հայրը. յամինայն դէպս աղջիկը իր
մօրը այլ կերպ է սիրում, քան իր հօրը, տղան էլ իր
հօրը այլ կերպ է սիրում, քան մօրը: Յետագայ տա-
րիներում, երբ նորահասները արգէն սկսում են ընտա-
նիքից գուրս հայեացք գցել իրանց ապագայ գործու-
նէութեան իդէալները կազմել և սկսում են իրենց կո-
չումը զգալ, այդ սեռական խտրութիւնը աւելի խիստ
է աչքի զարնում: Ցղան միշտ կարծում է, թէ հայրը
նրան աւելի լաւ կը հասկանայ, իսկ աղջիկն էլ թէ
մայրը: Եւ սա անշուշտ անհիմն չէ:

Միտս է գալիս մի մօր հետ ունեցած վաղուցւայ
խօսակցութիւնս, մի մօր, որ արդէն մի-քանի չափա-
հաս որդի ունէր: «Մայրը, ասում էր նա, պէտք է կրթի
իր երեխաներին, տղայ թէ աղջիկ, քանի գեռ փոքր
են: Բայց երբ տղայքը տարիք են առնում, աւելի դէ-
պի հայրն են հակում, քան դէպի մայրը, և մայրը
պէտք է հետզետէ տղայոց գեկավարութիւնը յանձնի
հօրը: Ճիշտն ասած, մենք ձեզ շատ անգամ չենք էլ

հասկանում. կող դատողութեամբ այս կերպ պէտք է լինի, տղամարդու դատողութեամբ լինում է այլ կերպ. և հասկանալի է թէ ինչու. տղայը պատրաստում են հասարակական դործունէութեան. այդ գործունէութիւնը մենք դիտում ենք միայն մեր ամուսինների, եղբայրների և միւս տղամարդոց վրա, իսկ գուք ուղղակի կատարում էք և ձեր գիտողութեան շրջանակը աւելի լայն է: Դա ձեզ համար աւելի մօտիկ գործ է, դա ձեր գործն է: Եւ մայրը եթէ չի ուզում իր հեղինակութիւնը կորցնի որդիների աչքում, շատ դէպում պէտք է նրանց ուղղակի ասի՛ խօսիք հօրդ հետ»:

Անձնական փորձից հանած իր այս եղբակացութիւնները մեզ յայտնող տիկինը պատկանում էր այն սերնդին, որն արդէն քաշւել է ասպարէզից: Ժամանակակից կանանցից շատերը իրանք էլ փորձով գիտեն ինչ է հասարակական ծառայութիւնը, բայց մեծ մասմբ նրանցից շատերը մայր չեն լինում: Իսկ մայրերի մէջ, առաջւայ նման, քիչ են այնպիսիները, որոնք հասարակական գործունէութեանը աւելի մօտիկ ծանօթ լինեն, քան թէ ուրիշներից լսովի իմանալով ու կողմնակի դիտելով: Այդ յարգինի տիկինը ասածների մէջ ճշմարտութեան մի բաժին կայ, որ մեր ժամանակւայ մայրերի համար էլ իր ուժը պահում է, գոնէ ոմանց համար:

Ինքնին հասկանալի է, որ նոյն զգուշութիւնը պարտաւորիչ է և հօր համար, երբ իր աղջիկների կեանքի ու բախտի մասին է խօսում: Մօր խօսքը այդ-

տեղ յաճախ աւելի հեղինակաւոր պիտի լինի, մանաւանդ որ աղջիկների համար աւելի հասկանալի է:

Յիշեցնում եմ, որ այստեղ խօսքս այն տեսակ հարցերի մասին է, որոնք երեխի բախտն են վըճռում: Քանի երեխան դեռ գպրոց չի մտած, այդ տեսակ հարցեր հազիւ թէ առաջ գան: Բայց և այնպէս այստեղ խօսում եմ այդ մասին, որովհետեւ երեխի կեանքում խիստ բաժանումներ չը կան և ոռվորաբար ինչ որ կատարւելու է գեռ հեռաւոր ապագայում, արդգէն նկատում է շատ աւելի վաղ, թէկ հազիւ նշմարելի գծերով:

Այս բոլոր ասածիցս պարզ է ընթերցողի համար, որ մեր իդէալը ծնողների միասին գործակցութիւնն է և որ այդ գործակցութեան միջոցին նախանձ չը պիտի լինի, երբ մայրը տեսնում է, որ հայրը իրանից աւելի ազգեցութիւն ունի, կամ հակառակը: Սակայն վերջին ժամանակներս բոլորովին ուրիշ բան է ասուում ու գրւում:

Մայրերը յաճախ գանգատուում են, որ հայրերը բոլորովին ետ են քաշւել երեխաների կրթութիւնից և բոլոր հոգսը բարձել են մօր վզին, որ իսկի հնար և ժամանակ էլ չի լինում հայրերի հետ երեխի մասին խօսելու, որովհետեւ այդ կարգի խօսակցութիւնը նրանց չի հետաքրքրում: Օրւայ աշխատանքից բիշ հանգստանալուց յետոյ նրանք շտապում են ժողովարան կամ մի այլ տեղ, մտածելով որ իրանց հայրական պարտաւորութիւնը միայն փող աշխատելն է, ընտանիք պահելը և երեխաների կրթութեան ծախսերը հոգալը:

Ինքնին հասկանալի է, որ ընտանիքի մէջ հօր այդ տեսակ գիրքը և անարդար է, և անբնական: Անարդար է մօր վերաբերմամբ, որովհետև կրթութեան բոլոր ծանրութիւնը այդպիսով ընկնում է մօր վրա, մինչդեռ նա իրաւունք ունի հօրից օգնութիւն և խորհուրդ պահանջելու ամեն քիչ թէ շատ դժւար կամ կասկած յարուցանող դէպրերում: Հէ՞ որ երեխաներին կրթելը հէնց այն առաջնակարգ ընդհանուր խնդիրն է, որ ընտանիքը զօդող գլխաւոր կապն է կաղմում: Անարդար և երեխաների վերաբերմամբ, որովհետև նրանք այդպիսով զուրկ են մնում հօր ազգեցութիւնից, որից օգտուելը իրանց իրաւունքն է: Բայց հօր այդ տեսակ վերաբերմունքը նաև անբնական է. Հէ՞ որ այդ երեխաները իրեն են, նոյն իսկ անստունները սիրում են իրանց ձագերին և նրանց ոչ միայն կերակրում են, այլ և խաղում են հատները, սովորեցնում: Հօր իր երեխաներից օտարանալը մարդու բնութեան մէջ չըկայ, դրա պատճառները գուրսը պէտք է որոնել:

Այդ պատճառները հազիւ թէ կեանքի ընդհանուր պայմանների մէջը գտնուն, քանի որ հայրական զգացումի այդ աստիճան բթացումը բնաւ այնպէս տարածւած երեսութչէ, մի բան, որ լինելու էր, եթէ պատճառները ընդհանուր լինէին: Հաւանօրէն ամեն մի մասնաւոր դէպքում մասնաւոր պատճառներ կան, որը որոշելը հնարաւոր չէ միշտ կողմնակի դիտողի համար: Իսձ թւում է, որ այդտեղ յամենայն դէպս գոնէ մի փոքրիկ սառնութիւն է մտած լինում ընտանեկան յարաբերութեան մէջ և որ արդէն շահերի զանազա-

նութիւն է մէջ եկած: Դառնալով գանգատաւոր մօրը, կարելի է հարց տալ, չը լինի թէ շատ մանր-մունր բաների ետևից էք ընկած, որ ձեր աչքում կարևոր են երեսում, իսկ լուրջ բան չեն համարւում հօր աչքում: Չը լինի թէ շատ պինդ էք կանգնած ձեր հայեացքների վրա, այնպէս որ հայրը մի երկու անգամ վիճելուց յետոյ թափ է տւել օձիքը, թէ՝ արա ինքդ ինչպէս ուզում ես. և կերջապէս արգեօք դուք ինքներդ ուշադիր եղել էք ձեր մարդու հոգսերին ու յուզումներին, որ նա ունեցել է տնից գուրս, իր գործունէութեան մէջ: Դառնալով հօրը, որից զանգատուում է կինը, կարելի էսաել. «Հիանալի կին է ձեր ամուսինը և ձեր երեխաների խելօք դաստիարակիչ և գուք նրան ամբողջապէս կարող էք վստահանար բայց չէ որ նա ձեր խորհուրդն է ուզում, ցանկանում է մտքերի փոխանակութիւն, միթէ իրաւունք ունէք մերժելու»: Խորամանկութիւն չէ ձեր արածը, որ այդպէս թաք էք կենում ձեր կնոջ տաղանդաւորութեան ետք, իբրև թէ շատ էք վստահում նրան: Կարելի է գուք երեխաների կրթութիւնը, կոպիտ բառով ասած, համարում էք կնկայ գործ, տղամարդուն անվայել: Ուրիշ հարցեր չեմ տալիս, որովհետև լաւ չեմ հասկանում, թէ ուրիշ ինչ լուրջ պատճառ կարող է լինել, որ հայրը յանկարծ բաւականանայ մի անպատւաբեր գերով և դառնայ պարզապէս միայն ընտանիքի միջոցներ ճարող և հաց բերող:

V.

Երեխաները ընտանիքի ոչթէ գլխաւոր, այլ հաւասար անդամներ են:

Դիտելով ծնողների յարաբերութիւնը դէպի երեխաները, մարդ նկատում է երկու ծայրայեղութիւն իրանց բազմատեսակ նրբութիւններով: Երեխաները կամ ընտանեկան կիա՞քի կենտրոնն են կազմում, կամ ընկած են բոլորովին հեռաւոր ծայրերը: Առաջին դէպքում ամեն բանի մէջ երեխան առաջին տեղն է. Նրանց են յստկացւում լաւագոյն սենեակները, ժամանակը յարմարեցնում են նրանց պէտքերին, իսկ նրանց դաստիարակութեան գործում ամենից բարձր են դասում ինքնուրոյնութեան սկզբունքը և ինչքան հնար է կանխում են ամեն ցանկութիւններն ու զիջում ամեն բանում, միայն թէ երեխաները առանց ճնշման զարգացնեն իրանց անհատականութիւնը: Այդ երեխաներից շատերը, գուցէ և միծ մասը, դառնում են երես առած, եսական, հաւասարակշռութիւնը կորցրած ու խախուտ մարդիկ: Հոգեբոյժները իրանց հիւանդների վրա յաճախ են տեսնում այդ տեսակ քնիքուշ դաստիարակութեան հետքերը: Ես մի քանի ընտանիք եմ ճանաչում, ուր նախ թոյլ էին տալիս, որ երեխաները մեծանան կատարելապէս իրանց քէֆին, նրանց ինքնուրոյնութիւնը չը ճնշելու համար, իսկ յետոյ ծնողները արդէն առիթ էին որոնում անից փախչելու համար, որ Սոդոմ էր դարձել: Պարզ է, որ ծնողները երեխաներին առաջին տեղը դնելիս, իրանք չեն անցնում երկրորդ տեղը, ինչպէս որ կարծում են, այլ հասնում են այն աստիճա-

նին, որ ընտանիքում էլ իսկի տեղ չի մնում իրանց: Հնար չեն ունենում ոչ հանգստանալու, ոչ կարդալու, ոչ զբաղւելու իրանց տանը: Երբեմն ծնողները հիասթափում են իրանց կրթական այդ սիստեմից շատ ուշ, երբ երեխաները արդէն հասակ առած են լինում. այդ ժամանակ արդէն բացարձակապէս երևան է դալիս, թէ ինչ աստիճանի անպէտք մարդիկ են դարձած իրանց սանիկները, աշխատանքի անսովոր, ինքնասէր թուլամորթ ամեն գժւարութեան հանդէպ:

Իսկ երկրորդ դէպքում, երբ երեխաների վրա ընտանիքում շատ ուշը զարձնող չի լինում, նրանք դառնում են յաճախ ինքնուրոյն ու դիմացկուն բնաւորութեան տէր, բայց և կարող են ենթարկել վատ ազդեցութիւնների կամ իրանց խելքով կարող են հասնել սխալ ու վնասակար եղրակացութիւնների:

Հասկանալի է, որ մեծերի բնական յարաբերութիւնը այս ծայրայեղութիւնները չեն. սրանք միակողմանի են, որովհետեւ կրթութեան երկու հիմնական ֆակտորներից, գործօններից միայն մէկին են ազատ ընթացք տալիս: Երեխի բնութիւնը և շրջապատի ազդեցութիւնը,—ահա այդ երկու գործօնները, որոնց փոխադարձ ներգործութիւնից ծնում է կրթութիւնը:

Երեխի բնութեան մէջն են այն բոլոր ուժերը, որոնց ջնորհիւ երեխան աճում է ոչ միայն մարմնով, այլև հոգեպէս: Նա զգում է, դիտում, ընդհանուր գաղափարներ է հանում, դասաւորում է իր դիտողութիւնները, մտածում է, իր պահանջներին բաւարարութիւն է որոնում, փորձում ու մարզում է իր ուժերը

և այդ պատճառով իր զարգացման բոլոր աստիճաններին նա ունենում է իր մտքերը, իր ճաշակը, իր տեմպերամենտը, իր բնաւորութիւնը: Նա կրթւում է ինքն իր ուժերից, կրթւում է անխուսափելի կերպով, քայլ առ քայլ ձեռք բերելով և հաւաքելով իր եսի բովանդակութիւնը:

Բայց հասկանալի է, որ բախտաւոր բնաւորութիւնները եթէ ընդունակ են աշող կերպով իրանք իրանց կրթելու, մեծամասնութիւնը, անգոյն մեծամասնութիւնը կարող է միայն դանդաղ առաջ շարժւել, դժւար ու չարչարանքով, յաճախ շեղւելով ճամբից, հասնելով յաճախ սիսալ մաքերի ու իւրացնելով ֆիսաակար հակոմմեր: Ինքնուսը գուցէ և դատի ուղիղ, բայց իր փաստերը թերի են, գիտեցածը քիչ և իր եղբակացութիւնները գառնում են սիսալ, միակողմանի կամ նեղ: Մրանով էլ որոշւում է մեծերի ազդեցութեան և օգնութեան հարցը:

Մայրը երեխին ուտել է սովորեցնում, նախ ինքն է կերակրում գղալով, յետոյ սովորեցնում է գղալը բռնել, ուղիղ բելանը տանել, ափսէն պահել և այլն: Մայրն է նրա համար կերակուր ընտրում: Մօրիցն է սովորում խօսելը, նրանից է ստանում լեզուն, այսինքն՝ նրանից է իւրացնում ձայների պայմանական նշանակութիւնը, տարբական ստուգաբանութիւնն ու համաձայնութիւնը: Մայրն է զիր սովորեցնողը: Մայրն է սնունդ տալիս նրա մաքին ու երեակայութեանը, կարդում է, պատմում է, նկարներ է ցոյց տալիս, սրանով ոչ միայն նրան ուժերը գործադրելու աշխատանք

է տալիս, այլև հարստացնում է նրա անձնական փորձերի ու գիտողութիւնների պաշարը: Սարսափելի շատ բան է իւրացնում երեխան իր առաջի տարիներում, զիտութիւն, ունակութիւն, վարժութիւն, և իւրացնում է շնորհիւ մեծերի հետ շփւելուն. իսկ իւրացրածը այն տեսակ բաններ են, որ այժմ կամ յետոյ անհրաժեշտ են նրան մարդոց հետ յարաբերութիւն ունենալու միջոցին:

Այս կարգի իւրացումների ժամանակ սկզբում գլխաւոր գեր խաղացողը մի կողմից նժանւեն է, միւս կողից ցոյց տալը, օրինակը. բայց այդ առաջին արտաքին զրդումի ետևից գալիս է մի ներքին վերտաշակում: Երեխան գրել է սովորում, նմանւելով գծում է տառեր, բայց և միւնոյն ժամանակ մշակում է իր ձեռքի գիրը, ուր արդէն անհատականութիւն կայ: Երբ երեխին կարգում են, նրան այս մէկը աւելի է գուք գալիս, քան այն միւսը: Հետզինէ նա ստանում է իր խօսելու, պատմելու, մտածելու մասնաւոր ձեր, իր յատուկ բայլւածքը, իր ճաշակը, իր տեմպերամենտը: Ոչ մի կարիք չը կայ և բոլորովին էլ անօգուտ է, որ մարդ այդ անհատական գծերը յղկել կամ բռնի ծոել ուղենայ:

Մեծերի հետ ապրելով միայն այս չէ, որ երեխան ձեռք է բերում. նա ստանում է նաև աւելի լայն բարոյական հորիզոն: Ինքնին հասկանալի է, որ մարդկանց հետ շփւելը, այսինքն իր հասակակիցները, ծառաները, հիւրերը, պատմահական մարդիկ, բոլորը միասին հաշւած՝ միշտ մի բան են տալիս նրա բարոյական աշխարհին: Այդ յարաբերութիւնների ժա-

մանակ նա սովորում է արդար լինել, զիջող կամ պահանջկոտ, գնահատել կամ ոչ իր և ուրիշի սեփականութիւնը, օգնել ուրիշներին սիրով կամ գողալ իր ունեցածի վրա, և այն: Այս բոլորը նա սովորում է նաև իր ծնողներից, և աւելի իր ծնողներից, բան թէ օտարներից: Միայն ծնողների գերը այստեղ տարրեր է, բան ուրիշներինը. Նրանցից պահանջւում է զլխաւորապէս բարի խրատ: Բանն այն է, որ մարդ ապրում է ու գործում հասարակութիւն մէջ, այդտեղ է գտնում իր բարձրագույն պահանջների բաւարարութիւնը, և հազիւ է պատահում որ մէկը կամովին մէկուսանայ ու ինքն իր մէջ ամփոփիւ: Մարդ ընկեր է փնտում, ընտանիք է կազմում, հասարակական գործունէութիւն է մասնակցում և իրան քղաքացի է զգում իր հայրենիքի: Հասակաւորների հետ այս կենակցութիւնը տալիս է անհատին իրաւունքներ, բայց և պարտաւորութիւններ է զնում նրա վրա, նըրանից որոշ զոհաբերութիւն է պահանջում, պահանջում է որ անհատը իր իրաւունքները հաշտեցնի ուրիշների ունեցած իրաւունքի հետ և կարողանայ իր ըղձերը զեկավարել: Մարդ հետզհետէ է սովորում ուրիշների հետ ապրելու. բնականօրէն սկսում է նրանից, որ մէջ է բերում իր պէտքերը, իր հակումը, իր ուզածը, սակայն անհրաժեշտ է, որ գեռ մանուկ հասակից յարգել սովորի նաև ուրիշների իրաւունքը և չը կատարի միայն այն, ինչ որ սիրու ուզում է: Երեխաները յաճախ ուզում են իրանց քրոջ կամ հղոր ձեռքի խաղաղը և երբ չեն ստանում՝ հակած են խլելու: Եթէ

աւելի մեծ են և աւելի ուժեղ՝ խլում են, երբեմն նոյնիսկ դիմագրութեան էլ չեն հանդիպում, այլ միայն արցունքի. պարզ է, որ նրանք այստեղից ոչ մի բարի խրատ չեն կարող հանել: Հայրը, մայրը, դայեակը, վերջապէս մեծերից մէկը պէտք է լինի, որ նրանց զգացնել տայ իրանց անարդար լինելը: Այս չի նշանակում, որ նրանց պէտք է պատժել խելքի բերելու համար, բայց ցոյց է տալիս, որ ծնողները պէտք է հեղինակութիւն ունենան, որպէսի ընդունուի նրանց խրատ տալու իրաւունքը և յարգւի նրանց խօսքը, որին պէտք է հնաղանգեւել:

Ուրիշների հետ ապրել իմանալը շատ կարեւոր խնդիր է և ցոյց է տալիս ընտանիքի նօրմալ կազմը: Երեխան ընտանիքի մէջ ոչ առաջինն է, ոչ էլ վերջինը, այլ նրա մի անդամը, հաւասար միւսներին, միայն տարիքով դեռ փոքրիկ: Ընտանիքի կեանքը ընդհանուր է: Մեծերը ունեն իրանց պարտաւորութիւնները, փոքրիկներն էլ իրանց, ի հարկէ համապատասխան իրանց տարիքին: Երբ զնում են պառկելու, էլ չը պիտի աղմկեն. երբ հայրն աշխատում է, նրա սենեակը պիտի չը մտնեն, որ չը խանգարեն նրան: Մեծերը պահում պահպանում են իրանց իրերը, փոքրիկներն էլ պէտք է աշխատեն իրանցը պահպանելու: Օրւայ կեանքը որոշւած է երեխաները պէտք է ձաշեն ժամանակին, խաղան ու պառկեն ժամանակին: Ընտանիքում երեխան սովորում է կարգի, աշխատանքի, ընկերախրութեան, արդարութեան ու ազնըւութեան, և այս բոլորը ձեռք է բերուում այնքան ա-

ւելի հեշտ ու տկալկան, որքան որ մեծերի կեանքը աւ-
ւելի պարզ է, աւելի խելացի, աւելի սիրով ու աւելի
աշխատանքի նւիրւած:

Այս բոլորն առացի ցոյց տալու համար, որ մեծն
էլ, փոքրն էլ ունեն իրանց իրաւունքները և նօրմալ
ընտանիքի մէջ մէկն էլ, միւսն էլ յարգւում են հաւա-
սարապէս: Լաւ մայրը միշտ ընդունում է երեխի իրա-
ւունքը, թէկ երբեմն կարող է սխալ հասկանալ: Բայց
հարցը ուրիշ է: արդեօք ընդունում է նա սկզբունքով,
որ պէտք է տալ երեխին այն ամենը, ինչ նրա իրա-
ւունքն է, թէ միայն հնարաւորը, և ո՞ր աստիճան
պատրաստ է նա իր իրաւունքները զոհելու երեխի օգ-
տին: Ուզում էի ցոյց տամ, որ միակողմանի է այն
վճիռը, թէկուզ լինի միայն սկզբունքով, թէ երեխին
պէտք է տրւի ամենը, ինչ որ նրա իրաւունքն է. միա-
կողմանի եմ ասում, որովհետև երեխան միայն անհատ-
չէ, այլ և հասարակութեան անդամ, մի հասարակու-
թեան, որ կազմւած է հասարակիցներից, ծնողներից
ու ծառաներից: Ինչըան էլ տարրական լինեն այդ հա-
սարակական շփումները, բայց և այնպէս կան. և երեխի
ընկերական յատկութիւնների զարգացումը հնարաւոր
է միայն այն փորձերով, որ նա անում է թէ մեծերի
և թէ փորբերի հետ իր ունեցած յարաբերութիւնների
ժամանակ: Երեխան ապրելով այն սեսակ պայմանների
մէջ, որոնք մասամբ հնարաւած են մեծերի օգտին, եթէ
այսպիսով մի կողմից տուժում է, շահում է միւս կող-
մից:

Իսկ իրական կեանքում ոչ միշտ ոչ էլ շատերը

կարող են տալ երեխին այն ամենը, ինչ որ պէտք է
և ինչ որ տալ կուզենային: Շատ ծնողների համար
դան վիշտ է այն գիտակցութիւնը, որ երեխան չի
ապրում այնպէս, ինչպէս որ պէտք է, երբ տեսնում
են, որ հակառակ բոլոր իրանց զոհաբերութիւնների.
Երեխան չի մեծանում երեխի նման: Ցանկանում ես
երեխին մի լոյս, չոր ու տաք սենեակ յատկացնես,
բայց ստեղից գտնես մի բնակարան, որ գոնէ հա-
մեսա չափով բաւականութիւն տար առողջապահու-
թեան տարրական պահանջներին: Երեխի համար
պէտք է արձակ տեղ, որ խաղայ ու վազվակի, բայց
ստիպւած ես նեղւածք ապրելու. միջոց չը կայ մի
մի բնակարան վարձելս, որի սենեակները սենեակ լի-
նէին, ոչ թէ խցիկները: Պէտք է երեխաններին տանես
մաքուր օդը ման ածելու, բայց ինչի՞ է նման պտոյաը
քաղաքի վողոցներում, մանաւանդ այնտեղ, որտեղ
կլիման վատ է: Բարի ցանկութիւնը կայ, չը կայ
միայն իրագործելու նիւթական հնարաւորութիւնը.
Հասարակական, կլիմայական և այլ պայմանները թոյլ
չեն տալիս, որ երեխանները վայելեն իրանց պէտք ե-
ղած օդը, լոյսը, տաքութիւնը, շարժումը: Մնում են
պալիատիւ, կիսատպուատ միջոցներ. այսպէս օրի-
նակ, եղածից ամենալաւ սենեակը յատկացնում ես ե-
րեխաններին, աշխատում ես հսար եղածին չափ շուտ
ամարանոց տանես և այլն: Ծնողների կամքիցը չէ
կախւած՝ տալ երեխաններին այն ամենը, ինչ անհրա-
ժշտած է և ցանկալի: Երեխանների ունեցած իրաւունքը
այն տեսակ արգելքների է հանդիպում, որոնց հեռա-

ցնելը վեր է անհատի կարողութիւնից: Սակայն նշանաւոր է այն հանգամանքը, որ մարդ գժգոհութեամբ է յիշում իր ծնողների կոփւները, աղմուկը, բռնակալութիւնը, սնափառութիւնը, մի խօսքով այն բոլորը, որ ընտանիքի ներքին խոցն է կազմում, մինչդեռ մարդ երբէք չի գանգատում կրած զրկանքներից ու կարօտութիւնից, եթէ զրանց պատճառը ընտանիքից դուրս է եղել: Ի հարկէ, սրանց թւում պէտք չէ դնենք այն զրկանքները, որոնք առաջ են գալիս ծնողների հարբեցութիւնից, խաղամոլութիւնից, շաայլութիւնից: Բայց այն բոլոր նեղութիւնները, որ գժբախտութեան ու աղբատութեան ծնունդ են, երբէք մելադրանք չեն յարուցանում ծնողների հասցէին:

Տառապանքն ու զրկանքը մի առանձին կնիք է գնում երեխաների և ծնողների յարաբերութեան վրա: Վիշտը ամեն անգամ մարդուն չի չարացնում, ամեն անգամ գաղան չի գարճնում, մի գաղան, որ իր սրտի կատաղութիւնը երեխաներիցն է հանում: Յաճախ նա առիթ է զառնում, որ մարդկային հոգին երեայ իր ամբողջ գեղեցկութեամբը: Վիշտը յաճախ ստիպում է մարդոց աւելի սերտ իրար կապելու և ընդհանուր ուժերով ու փոխադարձ օգնութեամբ վրա հասած գժբախտութեան գէմ մաքառելու. նա երեան է հանում մի անսպաս քնքշանքի աղբիւր գէպի իր տառապանքի ընկերը և հոգու մի զարմանալի ամրութիւն թշառութեան ժամանակ, Մանկութեան յիշութիւններ կարգալիս, մարդ յաճախ է հանդիպում ջերմ տողերի, նւիրւած հօր կամ մօր յիշառակին, որոնք

կեանքի խիստ ծանր հարւածների տակ իմաստութեան փորձ են ցոյց տւել:

Երեխաները ընտանիքի գլխաւոր անդամները չեն, այլ հաւասար անդամները, թէկ անշափահաս: Նախական ինսամատարութիւնը գաղարում է, հէնց որ երեխաները սկսում են խելահաս գառնալ, այդ օրւանից էլ գառնում են նրանք մեր ընկերը. կարող են ապրել մեզ հետ ընդհանուր ընտանեկան կեանքով և մասնակցել մեր վշտերին և ուրախութեանը: Պարզ ընտանիքներում կարիքը ստիպում է և շատ վաղ երեխաները դառնում են մեծերի օգնականը, մասնակցում են տան աշխատանքին, այսպէս օրինակ, պահում են փոքրիկներին, քշում են տաւարը և այլն: Բարեկեցիկ ընտանիքները այս կարգի շատ աշխատանքներից կարող են ազատել իրանց երեխաներին, քանի որ այդ ըրուրը յաճախ վեր է լինում երեխի ուժերից, բայց ինչոր նրա ուժից վեր չէ, հէնց ունենոր ընտանիքի մէջն էլ կարելի է երեխարերին կատարել տալ: Արդէն յայտնի է, թէ ինչ սիրով երեխաները օգնում են մեծերին և երեակայում են միամտօրէն որ մի մեծ ու լուրջ գործ են կատարում: Բայց այստեղ կարեուրը փիզիքական աշխատանքը չէ: Առօրեայ կեանքի ընդհանուր շահերն են, որ ընտանիքի բարոյական կապն են կազմում: Թող երեխաները իմանան, որ իրանց վջապատող ամեն մի բան, իրանց ունեցած ամեն մի իր, իրանց հօր ու մօր աշխատանքովն է ձեռք բերւած. թող իմանան. որ հայրը գնում է դուրս աշխատանքի, իսկ մայրը տանը հոգ է տանում երեխաների ու հօր

սննդի ու հանգստի մասին։ Եւ ոչ մի վկաս չունի, եթէ երեխան հասկանում է, որ ամեն մարդ իր վերակի համեմատ է ոտները մեջնում, որ մարդիկ ապրում են հաշով ու շատ բանից զրկում են իրանց։ Եթէ մի որեէ դժբախտութիւն է պատահում, երեխանքը տեսնում են, որ տիրու են հայրն ու մայրը ու մտաղբաղ։ Էլ ինչո՞ւ նրանց չը բացատրենք, թէ բանն ինչումն է, եթէ ի հարկէ հասկանալ կարող են։ Միայն թէ դա մի այն տեսակ դժբախտութիւն չը լինի, որից ամօթ ենք զգում։ Սովորաբար մենք շատ խիստ ենք պահպանում ոսկի մանկութիւնը այն տեսակ տպաւորութիւններից, որոնք աղարտում են այդ ոսկին։ բայց չէ որ դրանից մի արեւստական, մի կեղծ բան է մրտնում կեանքի մէջ։ Ոսկին թող աղարտի, դրա փոխարէն մենք ուրիշ բաներ ենք շահում։ առաջ են գալիս աւելի սերտ կազ, մտերմութիւն, շիտակութիւն ու սրտակցութիւն, ուրիշ խօսքով՝ ընտանեկան ջերմ ու ընդհանուր կեանք։

Կրկնում եմ, երեխան ընտանիքի հաւասար անգամն է, հաւասար, բայց անչափահան։ Իրրև անչափահաս նրանք անկախ չեն, հետեւում են ծնողների ինելքին և ընտանիքի աշխատութեանն էլ շատ թեթև են մասնակցում։ իսկ նրանց հաւասար իրաւունքներով ընտանիքի անդամ լինելը, երեւում է նրանից, որ մենք երեխաների վրա չենք նայում վերեից ցած, այլ ինչպէս մեր ընկերների վրա, մասնակից ենք անում նըրանց մեր ուրախութեանն ու վշտերին, սրտանց լուսմ ենք, թէ ինչն է յուզում նրանց հոգին, և մենք էլ նրան-

ցից չենք ծածկում մեր ներքին աշխարհը, ինչ չափով որ նրանց համար հասկանալի է։ Երբ հայրն ու մայրը զուրս են գալիս միմիայն խրատ տւողի ու խաղեր սարքողի գերից, առաջ է գալիս ծնողի ու երեխի մէջ մի աւելի պարզ, աւելի ջերմ յարաբերութիւն, այսինքն այն դրութիւնը, որին շատ շատերն են ձգտում, բայց չեն համուռմ։

Երեխի մանուկ հասակին ծնողները սերմանում են այն, ինչ որ յետոյ հնձելու են նրանց երիտասարդ ու հասուն տարիներին։

Եթէ ուզում ենք որ մեր երեխաները մեր բարեկամը լինեն իրանց երիտասարդութեան ժամանակ և աւելի ուշ, պէտք է որ մենք նրանց բարեկամը դառնանք հէնց մանուկ օրերից ու երբէք վերեկից ցած նըրանց մտիկ չը տանք։ Հերիք չէ խրատ տալը, թէ վատ բան անելուց յետոյ քաջութիւն ունեցիր խոստովանելու և այն։ Նոյնպէս հերիք չէ, որ ծնողը ինքը չըստի ու չը գցի ուսերին առաքինութեան կեղծ վերարկուն, այլ պէտք է այնպէս ապրի, որ ծածկելու բան չունենայ, որ նրանց գատապարտութիւնից գախենալու առիթ չունենայ. որովհետեւ երեխաները գատապարտում են միայն վատ բանը, ոչ թէ դժբախտութիւնը, որովհետեւ նրանք էլ շատ լաւ են գնահատում, ինչ որ մենք մարդկային արժանաւորութիւն ենք համարում, և միշտ ուրախ կը լինեն, եթէ այդ արժանաւորութիւնները իրանց ծնողների մէջ էլ գտնել կարողանան։

Երես-առածներն ու երեսից ընկածները: Ծնողական հսակա-
նութիւն:

Բացի աշխատասիրութիւնից, հոգեկան արիու-
թիւնից և դէպի ուրիշների վիշտն ու ցաւը ունեցած
կարեկցութիւնից երեխաները պէտք է տեսնեն ու սո-
վորեն ծնողական յարկի տակ նաև արդարութեան ու
շիտակութեան: Բնական է, որ ծնողները իրանց երե-
խաներին հաւասար սիրով չեն սիրում, նրանց տածած
սիրոյ մէջ տարբեր երանգներ են լինում, հայրը օրի-
նակ մէկին է աւելի կատած, իսկ մայրը միւսին: Զլ^ո
որ նոյն իսկ Քրիստոս՝ սիրոյ վարդակեալը, իր նախըն-
տիր աշակերտներն ունէր, որոնց և յայտնում էր իր
ամենից աւելի խոր մաքերը: Հազիւ թէ մարդ կարո-
ղանայ խեղդել իր զգացումը, երբ երեխաներից մէկին
միւսներից աւելի է սիրում: Բայց մարդ կարող է և
պէտք է կուլի ինքն իր հետ, որ այդ սէրը անարդա-
րութեան չը տանի, չը կուրացնի մարդուն, չը մղի
դէպի թուլութիւնը և երեխի համար բացառիկ դիրք
ըլստեղծի:

Ես երկար կանգ չեմ առնի, թէ հետեանքը ինչ է
լինում, երբ ընտանիքի մէջ երես տւածներ և երեսից
ընկածներ են գտնում, որոնց հանդէպ առուժում է ար-
դարութիւնը. ենթադրում եմ որ այդ պարզ է ամենքի
համար: Միայն ուզում եմ մատնանիշ անեմ, թէ ծը-
նողների այդ կուրութիւնը առաջ է գալիս ու հետզհե-
տէ աճում է այնպէս, որ ծնողներն իրանք էլ չեն

նկատում, թէ ոտք են գրել ապագայ չարիքների ձա-
նապարհը:

Թոյլ մայրերի չափազանց ու անմիտ սէրը ար-
տայայտում է երեխին երես տալով և նրա բոլոր ու-
զած կատարելով. աւելի ուժեղ մօր հոգում ուրիշ ձեեր
է ստանում այդ չափազանց սէրը, որը սակայն նւազ
անմիտ չէ: Իրանց նախասիրած երեխին նրանք օժ-
տում են ամեն տեսակ առաքինութիւններով, տաղան-
գով և երեխակայում են նրանց ստանալիք հասարակա-
կան գերքը, պաշտօնը, փառքն ու երջանկութիւնը:
Ծան այն է, որ մօր վազօրօք պատւիրած այդ սակի
շրջանակին ամեն անգամ սազ չի գալիս երեխի անձ-
նաւորութիւնը, և որ մայրը չի գիտակցում, թէ երե-
խի բախտաւորութիւնը իր սեփական բախտաւորու-
թեամբն է ուզում փոխարինի. նա ուզում է, որ երե-
խան այս տեսակի մարդ զուրս գայ և որ ինքը նայի,
հիանայ ու հպարտանայ: Եւ եթէ ուժեղ է այս տեսակ
մօր կամքը, սկսում է զուել ու ծուել երեխի բնաւո-
րութիւնը, և մենք իրաւունք ունենք ասելու, որ դա
սէր չէ, այլ մայրական հսականութիւն:

Այս կերպ վարեող ծնողները ցոյց են տալիս, թէ
ինչպէս յաճախ մոռացում է այն պարզ ձշմարտու-
թիւնը, որ երեխաները յաւիտահան երեխայ մնալու չեն,
որ մեծասալու են և անկախ, հասուն մարդ գառնալու:
Այս կէտը պէտք չէր որ մոռանայինք. և կեանքը ինքն
էլ յիշեցնում է մեզ վերջը, միայն ուշ, երբ արդէն ո-
չինչ ուզզել չենք կարող: Երեխաները մեծանալով դառ-
նացած կտրւում են ընտանիքից, դուրսը ստանում են

իրանց նոր կազմը և դառնում են մի տեսակ՝ օտար մարդ իրանց հայրենի յարկի համար։ Եւ հանդէս են գալիս տարբեր տիպի հայրեր ու որդիներ։ Այս երեսյթը միշտ էլ գոյութիւն ունեցել է, միայն վերջին տասնամետակներում աւելի սուր կերպարանք է ստացել։ Մեր կեանքը ենթակայ նոր հոսանքների՝ աւելի արագ սկսաւ նորւել ու փոխւել, և տասն-տասնընդինդ տարրով իրարից հեռու կանգնած սերունդները այլ ևս շատ բաներով իրար չեն նմանում։ Ասած ծնողական եսականութիւնը աւելի նեղ շրջանակի մէջ էր արտայայտում։ Ընդհանրապէս աղջկան ստիպում էին որ հարստի գնայ, և տղին էլ որ զինւորական կամ չինովսիկ դառնայ, եթէ վերջինս օրինակ ուզում էր գիտութեան հետեւ կամ գեղարւեստի։ այժմ այդ շրջանակը անհամեմատ աւելի լայնացել է, ցանկութիւնները շատացել են և աւելի խոր ու աւելի թանկ հարցերի շուրջն են դառնում։ Երբ փոփոխում են հասարակական իդէալները, երկու սերունդների տարածայնութեան համար շատ խնդիրներ ու կէտեր հն դուրս գալիս։

Բայց հայրերի ու որդիների անջատումը ամեն անգամ այս տեսակ խորին տարածայնութիւնից չի ծնւում, և պէտք չէ կարծել, որ միշտ նոր սերունդը իր նախորդներից բարձր է կանգնած։ Շատ ցաւալի է և բազմաթիւ պատճառների ծնունդ, որ մեր ընտանիքներում աւանդութիւն ու տրագեցիա չը կայ, չը կայ իրար յաջորդող սերունդների մէջ մի ներքին կապ, չը կայ գաղափարների ու մտքերի որոշ ժառանգական յաջորդականութիւն։ Երբեմն նոյն իսկ դիտողը չի էլ

կարող բացազրել, թէ ինչո՞ւ և ո՞րտեղից առաջացաւ այդ անջատումը։ Եւ այդ ընդհարումից ազատ չեն ոչ իսկապէս յարգելի ծնողները, ոչ էլ ծշմարիտ լաւ երիտասարդները, մասնաւանդ եթէ խոր համոզումների տէր են և քիչ էլ ուրիշ կարծիքը չը հանդուրժող։

Բայց ես կարծում եմ, որ հայրերի ու որդիների այդ ընդհարումը իսկի անխուսափելի չէ։ Ամենքս էլ ձանաշում ենք ընտանիքներ, ուր երիտասարդ սերունդը սիրով է ապրում հին սերնդի հետ, ուր հինն ու նորը պահում են իրանց փոխադարձ յարգանքը, թէն զանգան հասարակական երեսյթների ու հարցերի վերաբերմամբ կարող են տարբեր կարծիքի ունենալ։

VII

Ժառանիքն ու դայեակը։

Երբ ծառայի ու մասնաւանդ դայեակի մասին է խօսքը, նախ պէտք է աչքի առաջ ունենանք, թէ ինչ տեսակ ծառայ է։ Ինքնին հասկանալի է, որ ամեն մի ծնող կամենում է լաւ ծառայ ունենայ հէնց իր յարձարութեանը համար, բայց այդ ամեն անգամ չի յաջողւում։ Հին ժամանակների դայեակի տիպը արգէն վերջացել է, կամ շատ հազիւ է պատահում։ Նոր ժամանակները նոր կերպարանք տւին ծառանիքի ունեցած յարաբերութեանը դէպի իրանց տէրերը, դէպի իրանց «տեղերը»։ Առաջ ինչպէս կեանքը ինքը, այնպէս էլ ծառանիքը աւելի նստակեաց էին, աւելի կապւած իրանց «տեղին» և երկար տարիներ ապրելով միւնոյն տանը՝ արգէն սովորում էին երեխաներին,

Նոյն իսկ կապւում: Այժմ ինչպէս մենք ինքնելս, այնպէս էլ ծառաները աւելի շարժուն կեանք են վարում, որոնում են՝ որտեղ է աւելի լաւ. Նստակեաց կեանքը շատ է թուլացել: Քիչ կը պատահի այժմ մի երեխայ որ մի քանի դայեակ փոխած չը լինի: Պարզ է, որ այս պայմաններում խօսք լինել չի կարող դայեակի թողած տևական ազգեցութեան մասին:

Լաւ դայեակ չը գտնելու գանգատը յաճախ է լուսում և ամեն կողմից: Նոյն իսկ առաջարկում են հիմնել մի առանձին հաստատութիւն հմուտ դայեակներ պատրաստելու համար: Այդ տեսակ պատրաստութեան դէմ ի հարկէ ոչ ոք լինել չի կարող, մանաւանդ երբ խօսքը մասր երեխաների ֆիզիկական հոգատարութեան մասին է: Ծնողներից շատերը դիտած կը լինեն, որ շարունակ կապրիզներ անող և շատ մանգիստ քնող երեխաները նոր դայեակի գալուց յետոյ յանկարծ մի-երկու գիշերւայ մէջ բոլորովին նօրմալ են գառնում: Եւ քանի՛ քանի՛ երեխաներ ստամոքսի խանգարում են ստանում դայեակների ձեռքից: Ել չեմ խօսում իսկի այն տեսակ ծանր դէպքերի մասին, որոնց յանցանքը վերջիվերջոյ դայեակի վրա է ընկում: Ֆիզիկական հոգատարութիւնը խիստ կարեոր գործ է, և դայեակի համար խիստ գնահատելի յատկութիւն է երեխայ խնամել գիտենալը:

Բայց մեր յօդւածի նիւթը ծառաների ու երեխաների յարաբերութեան մասին է, որքեմն նրանց հոգեկան ազգեցութեան մասին, և երեխի համար խնդրի այս կողմը նոյնըան և երբեմն շատ աւելի կարեոր է,

քան Փիզիկական խնամատարութիւնը: Կարելի է յուսալ, որ ժամանակով կունենանք կարգին պատրաստւած գայեակներ, որոնք գիտենան երեխայ խնամելը, բայց ոչ մի կերպ ակընկալել չենք կարող, թէ որևէ մի հիմնարկութիւն երբ և իցէ կարող կը լինի այնպիսի պատրաստութիւն տալ գայեակներին, որ սրանք բաւարարութիւն տան լուրջ ծնողների պահանջին հոգեկան գաստիարակութեան տեսակէտից: Եւ հարցը այստեղ գայեակի արտաքին վարմունքի մասին չէ, այլ նրա ներքին հոգեկան կազմի, որ խիստ նուրբ ու անհաստական էնդիք է: Այս մարզ գայեակի կրթութիւնը միշտ էլ երեխի մօր պարտականութիւնն է մնալու և ոչ մի հաստատութիւն նրան փոխարինել չի կարող:

Շատ բնական է, որ նոր դայեակին մարդ չի վստահանում. վստահելու համար պէտք է ճանաչել մարզուն, ճանաչել նրա բնաւորութիւնը, նրա աշխատանքը: Պատահում է, իրաւ, կինը դայեակ է դառնում այն պատճառով, որ իր բնաւորութեան ու տարրիքի համար ամենից աւելի գուրեկան աշխատանքը երեխաներին նայելն է, որովհետեւ իր անձնական կեանքը մի տեսակ արդէն անց է կացրել և հասել է այն ժամանակին, երբ կնոջ մէջ մայրական բնազդն է գերիշխողը, երբ նա պահանջ է զգում երեխաների մէջ ու երեխաների համար ապրելու, լինի իրը, լինի ուրիշինը: Բայց պատահում է և այլ կերպ. կինը ուզում է ծառայութեան մտնի և գերազառում է դայեակի պաշտօնը, որովհետեւ դայեակը ապրում է տնեցոց հետ նրանց սենեակներում, ուտում է յաճախ նրանց սեղանից և

տօներին էլ աւելի արժէքաւոր նւէրներ է ստանում։
Եւ եթէ նրա անցեալն էք քրքրում, դուքս է գալիս,
որ մի ժամանակ խոհարարուհի է եղել, վերջն էլ մի
որեէ պանդակում աման լւացող, որ մի եղբայր ունի
ով գիտի ինչ գործերի և որ ինքը երազում է մի փոք-
րիկ կապիտալ հաւաքի ու գնայ մանրավաճառի խա-
նութ բաց անի։ Հասկանալի է, որ այս կարգի պա-
տահական դայեակին շատ էլ վստահել չի կարելի.
Շատ շուտով հասնում է մօր ականջին, որ պտոյտների
ժամանակ դայեակը հանդիպում է եղբօրը խանութը
կամ լինում է իր սիրեկանի մօտ, որ խփում է երեխին
կամ զանազան խմորեղէններ է կոխում նրա բերանը,
որպէսզի նա խելօք նստի, մինչև ինքը իր գործը կը
վերջացնի։ Ես խիստ բնական եմ համարում, որ մայրը
միշտ պէտք է աշքը բաց պահի, որ ինքը պէտք է ո-
րոշի պտոյտի փոլոցներն ու տեղը և երբեմն էլ պէտք
է ստուգի, իրաւ այնտեղ են երեխաները, ուր ինքը
ուզարկել է։

Յաճախ է պատահում, որ հիւանդ երեխի մօտ
կանչւած բժիշկը յայտնում է, որ երեխին մի որ և է
վատ բան են տւել ուտելու, որ զրգուել են երեխի սե-
ռակոն մասերը, որ չեն հսկել կամ առողջապահական
տեսակէտից վատ են պահել. և դայեակի այս տեսակ
վարմունքի պատճառը կամ տգիտութիւնն է լինում,
կամ անփութութիւնը և կամ վատ հակումները։ Շատ
այս կարգի բաների առաջը առնւած կը լինէր, եթէ
մայրը իսկոյն չը վստահանար դայեակին և ուշադիր
հետեւ իր երեխի խնամատարութեանը։

Այդ մանրակրկիտ հսկողութեանը անհրաժեշտ է
և այն տեսակէտից, որ մայրը որոշի իր դիրքը դայեա-
կի առաջ և որ հէնց առաջին օրից սկսի նրա կրթու-
թիւնը։ Դայեակը պէտք է գայ այն համոզմունքին, որ
տիկինը գիտէ ու կարող է երեխին խնամել և որ բնաւ
դիտաւորութիւն չունի ուրիշին զիջելու իր մայրական
իշխանութիւնն ու հեղինակութիւնը և որ նա ցանկա-
նում է ձշգրիտ տեղեկութիւն ստանայ ամեն բանի
մասին, ինչ երեխին պատահել է իր բացակայութեանը։
Երբ մայրը համոզւի, որ դայեակը իմանում է իր գործը,
սիրում է երեխաներին, թեթեամիտ չէ ու սուտ չի
խօսում, բնականաբար կը սկսի հետզհետէ աւելի վստա-
հելու, և այդ վստահութիւնը այնքան կամի, որքան
մայրը համոզւի, որ դայեակը իր բացակայութեանն էլ
ճիշտ այնպէս է վարւում, ինչպէս իր ներկայութեանը
և որ նրա ասածներին կարելի է լիովին հաւատ ըն-
ծայել։

Ի հարկէ սա մի իդէալ է, և կեանքը մեզ ստի-
պում է, որ բաւականանանք այս իդէալի խիստ հեռա-
ւոր նմանութեամբն էլ։ Դայեակը պէտք է մօր օգնա-
կանը լինի, և միայն օգնականը։ Զափազանց ծանր
բան է, երբ մայրը շարունակ կասկածում է, թէ մի՞
դուցէ դայեակը նորից մի յիմարութիւն է արել մի՞ գու-
ցէ նորից խարում է, կամ երբ տեսնում է, որ դայեակի
մեղքից երեխաները հիւանդանում են, կապրիզ են ա-
նում և հարկ է լինում պատժի դիմել։ Զափազանց
ծանր է, երբ մայրը տեսնում է, որ որ իր կողքին ոչ
թէ մի օգնական է կանգնած, այլ գրեթէ մի թշնամի,

որի հետ անընդհատ կռիւ պէտք է մղես ձեռքի տակից, երբեմն էլ ուղղակի բացարձակ: Այս կռիւը արժէ միայն այն ժամանակ, եթէ յոյս ունես, որ այդ կնոջից մի լաւ գայեակի է գուրս գալու. բայց այն ժամանակ էլ զա արգէն կռիւ չի լինում, այլ գայեակի կողմից մի տեսակ յարձարում նոր տեղին ու նոր պայմաններին, մի տեսակ սրբագրութիւն գայեակի կրթութեան: Եթէ այդ յոյսը չը կայ, կռիւն անօգուտ է ու անտեղի պէտք է ուղղակի ճանապարհ դնել:

Փոխաղարձարար բաց ու վատահ յարաբերութիւնը անհրաժեշտ է թէ մօրը, թէ գայեակին: Թէ ինչքան անհրաժեշտ է մօրը, խօսեն անգամ աւելորդ է, բայց դա անհրաժեշտ է և գայեակին, որպէսզի երեխաների առաջ հեղինակութիւն ձեռք բերի ու նրանց հետ ունեցած իր կապը բնական դառնայ: Հէնց այն պատճառով, որ գայեակն ու ծառան մեր դասակարգիցը չեն, շատ տեսակէտից աւելի մօտ են կանգնած երեխաներին, քան մենք, ծնողներս: Մէկը իր կենսագրութեան մէջ յիշում է, որ երեխայ ժամանակ շատ աւելի մեծ սիրով էր խաղում ու լինում ծառաների հետ, քան թէ տան մեծերի: Տնեցիների հետ խաղալիս նա զգում էր, որ մի տեսակ զիջում են անում իրան, որ չեն խաղում ինչպէս խաղ և որ ամեն վայրկեան կարող են ընդհատել մտածելով՝ թէ հերիք է արգէն գւարձացրին: Մինչդեռ երբ ծառան է խաղում, խաղում է ոչ թէ փոքրիկ պարսնին զւարձացնելու համար, այլ իր հաճոյքի համար և խաղում է խակապէս, նոյն ոգեսրութեամբն ու հետաքրքրութեամբը, ինչպէս և երեխան:

Այստեղ նրանք հաւասար են իրար: Եւ միայն խաղի մէջ չէ, որ նրանք հաւասար են իրար, կամ գոնէ մօտ իրանց զարգացումով ու հասկացողութեամբը: Աւելի ուշ, իհարկէ, երեխան առաջ կանցնի իր գայեակից, որովհետեւ նրա զարգացումը աճում է, մինչդեռ դայեակինը արդէն հասած է իր սահմանին. բայց կայ մի շրջան, երբ գայեակի խօսքը շատ բան արժէ, որովհետեւ կը երեխան հասկանում է նրան, երբեմն շատ աւելի լաւ, քան թէ իր հօրն ու մօրը: Այս փոխաղարձ ըմբռոնումը երբեմն աւելի երկար է տեսում և այն տարիից էլ գինը, ուր նա մեզ բնական էր թւում: Պարզ ու հաստատ հաւատքը, անմիջական համոզումը երեխաների վրա յաճախ աւելի ուժեղ է ազգում, քան մեր ապացոյցներն ու խելօք դատողութիւնները:

Այն ընտանիքներում, ուր երեխան տարեկից ընկերներ չունի, ակամայ մեծանում է ծնողների ու դայեակի շրջանում: Ի հարկէ տանը լինում են նաև աղգականներ և հիւրեր, բայց սրանք գալիս են ու գնում մինչդեռ գայեակը զիշեր-ցերեկ ապրում է երեխի հետ, խաղում է հետը, սովորեցնում է կարգ ու կանոնի, մաքրութեան, պատճում է նրան իր կեանքը, և իր ձեռվ քարոզում է նրան կեանքի իմաստութիւնն ու բարոյականութիւնը. երեխան էլ օրը օրին նրան է հաղորդու իր տպաւորութիւնները: Ի՞նչ ձեւ է առնում նրանց այդ փոխաղարձ յարաբերութիւնը: Եթէ գայեակը լաւ բնաւորութեան տէր է, նա ինքը երեխի աշքին արժէք կը ստանայ, երեխան կը սիրի նրան, կը յարգի ու կը հնագանդի: Բայց և պատահում է, որ

դայեակը կամ մի ուրիշ ծառայ երեխի համար նշանակութիւն է ստանում ոչ իր ներքին արժանիքովը, այլ շնորհիւ արտաքին պարագաների: Լինում են այնպէս դժբաղդ ընտանիքներ, ուր երեխաները միայն ծառաներից են լսում ու տհանում մի խելօք խօսք, կարեկցութիւն ու գգւանք. պարզ է, որ այդ տեսակ ծառան ակամայ ահազին ազդեցութիւն է ձեռք բերում երեխի վրա:

Շատ կարեոր է մեծերի բռնած դիրքը դէպի գայեակն ու ծառաները, քանի որ փոքրիկների դիտող աշքերը ուշագիր հետևում են այդ յարաբերութեանը: Մայրն ասում է երեխին, որ չը պէտք է կռւել, եղբօր ու քրոջ սիրալ չը պէտք է կոտրել, իսկ ինքը պոսում է գայեակի վրա, հայնոյում է ու մինչև արցունքի է հասցնում, մինչդեռ երեխան կարելի է արդէն կապւել է գայեակին ու մեղքանում է նրան: Երեխին խրատում են, որ բարի լինի, իսկ իրանք իսկի բարի չեն լինում ծառաների հետ, և ահա երեխի գլխում ծագումն են առնում բազմաթիւ հանելուկներ: Մենք մեծերս գիտենք, որ մարդիկ բոլորովին այլ կերպ են վերաբերում դէպի իւրայինները և այլ կերպ դէպի օտարները, աւելի ևս դէպի ծառաները: Ինչ որ մէկի համար անհրաժեշտ ենք համարում, միւսի համար կարևութիւն չենք տալիս: Հէնց օրինակ բնակարանը, ծառային յատկացւած անկիւնը ընդհանրապէս զուրկ է լինում առողջապահական ամենատարբական պահանջներից, ամենատարբական յարմարութիւններից. իսկոյն երեւում է, որ բնակարանը շինելիս աչքի ա-

ռաջ են ունեցել միայն մեր յարմարութիւնը, իսկ ծառաներին իսկի ուշագրութեան չեն առել: Յաճախ ծառաները իսկի մի անկիւն էլ չունեն, գիշերները քնում են միջանցքներում, իսկ ցերեկլը նստում են ուրոր պատահի: Այսպէս էլ ամեն բանի մէջ: Դիտելով ծնողների այդ տեսակ վարմունքը, երեխաները մի կողմից սովորում են որ գեղեցիկ խօսքերը միայն ասելու համար են, ոչ թէ իշրագործելու, միւս կողմից էլ վարժուում են անփոյթ վերաբերելու ուրիշների մեզ մատուցած ծառայութեանը: Իրանք էլ են սկսում պոռալ ծառայի վրա, խօսուած են հրամայաբար և էլ չեն տեսնում ծառայի մէջ մարդը:

Մասնաւորապէս կարեոր է գայեակի վիճակը: Հնար եղածին չափ նրա ապրուստը պէտք է տանելի դարձնել, և հետը վարւել մարդավարի, որպէսզի երեխան տեսնի, որ մենք յարգում ենք նրան: Այս տեսակ յարաբերութիւնը, կարծեմ, արդէն ինքնին առաջ է գալիս, եթէ գայեակը վստահութիւն է վայելում. երեխի կրթութեան գործում նրա ունեցած կարեոր գերը, մեր համակրանքն ու երախտագիտութիւնը երեխաների օգտին նրա մատուցած ծառայութեան փոխարէն — այս բոլորը նպաստում են գայեակի բարձրացմանը: Յամենայն դէպս չը պէտք է մոռանալ, որ գայեակի ու միւս ծառաների հետ ունեցած մեր յարաբերութիւնը մի տեսակ գործնական բարոյականութիւն է գառնում երեխաների աչքին, մի տեսակ գործազրում մեր հասարակական իդէալների: Այն բոլորը, ինչ որ մենք անում ենք ընտանիքում գայեակի թէ նիւթական և թէ

բարոյական վիճակը բարելաւելու, բարձրացնում է նրա հեղինակութիւնը, իսկ այդ հեղինակութիւնը նրա համար կարևոր է մեր երեխաների հետ վարւելու ժամանակ: Միւս կողմից էլ դայեակի հետ քաղցր, մեղմ, ուշադիր, մանր-մունք կոփւներից խուսափող ու բարեցակամ վարմունքը կրթում է հչոց իրան դայեակին և սովորեցնում, որ նա էլ երեխաների հետ պէտք է նոյն կերպով վարւի ու նրանց էլ նոյնը սովորեցնի:

VIII

Տան միւս անդամները:

Այժմ մնում է մի քանի խօսք այն մերձաւոր ազգականների մասին, որոնք երեխի հետ նոյն յարկի տակ են ապրում, մի երկու խօսք էլ տան աւելի հասակաւոր երեխաների առիթով:

Ընտանիքի մէջ ազգականների գոյութիւնը, ինչպէս օրինակ պապը, տատը, քեռին, մօրաքոյը և այլն, ունի իր վատ ու լաւ կողմերը, բայց վատը կարծես աւելի շատ է, քան լաւը: Ես ներկայ էի, ինչպէս ծերուկ հայրը օրհնելով իր որդու պսակը խրատում էր. «Ոչ ոքի տունդ չառնես, որդի, ոչ հօրդ, ոչ մօրդ. Կնոջդ հետ ինչպէս կապրես էդ քո բանն է, միայն տես, որ մի ուրիշը մէջ չը խառնւի. գրանցից խէր քիչ կայ. ծերուկիս խօսքին ականջ գիր»: Ծերունու անձնական փորձը գուցէ մի քիչ շատ կտրուկ եղացաւ կացութեան է բերել նրան և նրա դատավճիռը գուցէ պէտք է քիչ մեղմել. բայց յամենայն դէպս նրա խօս-

քիրը կարծեմ շատերի շրթունքին հաւանութեան ժպիտ են առաջացնելու:

Ուրիշի ընտանիքում ապրող ամեն մի անհատ, ով էլ նա լինի, երբէք մոռանալու չէ, որ ինքը այդտեղ մի երկրորդական անձն է, և մասնաւորապէս երեխաների կրթութեան գործում միայն ծնողների օգնականը կարող է լինել: Միայն այս պայմանով կարող են նրանք ընտանիքի օգտակար անդամը դառնալ: Մօր համար միշտ մեծ թեթևութիւն է, եթէ տանը երեխաներին սիրող մէկը կայ, որի հետ փոքրիկներին կարող է պայոյտի ուղարկել, որ կարող է օգնի կար ու ձերին, խնամի հիւանդին: Հազար այս տեսակ մանր ծառայութիւններ կարելի է մատուցանել մօրը, որոնց համար նա միշտ շնորհակալ կը լինի: Եւ հչոց այս տեսակ մօտ, չերժ ու իրար օգնող կենակցութիւնն է, որ ամեն մարդ երևակայում է ընտանիք ասելիս և որ այնպէս լաւ է ազգում երեխի կրթութեան վրա: Անշուշտ երկրորդական անձերից ամեն մէկը ընտանիքի մէջ մացնում է մի քան որ իրն է, քանի որ ամեն մարդ իր ճաշակն ունի, իր սովորութիւնները, իր պահանջները. բայց սա ոչ միայն վնաս չունի, այլ նոյնիսկ շատ լաւ է: Թող երեխան զանազան տեսակի տպաւորութիւններ ստանայ, թող շփւի տարբեր բնաւորութիւնների հետ, թող տեսնի, որ մարդիկ զանազան կերպով են մտածում ու վիճում, որ սիրում են տարբեր-տարբեր բաներ, այս բայցը ոչ մի վնաս չունի, միայն թէ ընտանիքի ընդհանուր յարաբերութիւնը սիրալիր լինի, ազատ թշնամութիւնից, մըր-

ցակցութիւնից, խաբէութիւնից, ինտրիգներից, մի խօսքով այն ամեն ըանից, որ «ոսկի մանկութեան» չեն սազում:

Դժբաղդաբար քիչերն են կարողանում պահել այն սահմանը, ուր անհատի անձնականութիւնը տեղի պիտի տայ ընտանիքի ընդհանուր պահանջներին: Դեռ երեխայ չունեցող քեռին սովորաբար հիգնանքով է վերաբերում մօր մանրակրկիտ ու պեղանտ հոգածութեանը և սիրում է ծաղրի առնել այդ հարցը հենց երեխանիքի ներկայութեամբ: Մի ուրիշի համար երեխաները կարծես գւարճութեան առարկայ լինեն, նրանց հետ խօսում է միշտ մի առանձին տօնով, չարացնում է, խաւնում է նրանց խաղերին, խանգարում, սուսեր է հնարում այնքան, մինչև որ երեխան մի յիմար բան է անում և ստիպւած ես լինում պատժելու:

Հին սերունդն էլ ըիչ է պատահում, որ գայ տեղաւորւի նոր ամուսինների մօտ առանց յետին մտքի. չէ որ նրանք դեռ անփորձ են, պէտք է նրանց զեկավարել: Փորձառութիւնը անտարակոյս շատ մեծ բան է, և լաւ խորհրդին ամենքն են շնորհակալ: Բայց փորձանքն այն է, որ ծերերը սովորաբար շատ պահանջում են, որ իրանք լինեն առաջնորդը ու ամեն բանում յարգանք տեսնեն ու հնազանդութիւն: Եւ քչերն են գլխի ընկնում, թէ ինչ որ իրանց ժամանակում շատ տեղին եր, այժմ 20-30 տարի յետոյ՝ էլ իսկի բանի. պէտք չի նրանց ասածն էլ մեծ մասով կրթութեան հիմնական գաղափարներին չի վերաբերում, այլ արտաքին զանազան ձեերի, երկրորդական միջոցների,

որոնց, սակայն, իրանք խիստ լուրջ կարևորութիւն են տալիս: Ընտանիքներում ծնողների ու հին սերունդի մէջ պատահած ընդհարումների մի մասի պատճառը ծերունիների այս կարգի միջամտութիւնն է: Ուանք ուղղակի իրանց վրա են վերցնում մի տեսակ մանկավարժ ցենզօրի պաշտօնը և աշխատում են փոխելու ու դրստելու այն ամենը, ինչ որ իրանց կարծիքով վատ են արել հայրն ու մայրը: Եթէ նրանց թւում է, որ ծնողները շատ խիստ են վարում, իրանք սկսում են երես տալ երեխաններին. իսկ եթէ կարծում են, որ ծնողները շատ են երես տալիս, իրանք սկսում են կոշտ ու թունալից վերաբերել երեխին: Այս տեսակ հակառի վարմունքից, ի հարիէ, միշտ երեխաններն են տուժում: Տերուկը շարունակ վիրաւորում է ու գանգատում, որ երեխանները իրեն չեն յարգում, մայրն էլ նրա հեղինակութիւնը չը ձգելու համար յանդիմանում է երեխին, որ այսպիսով դառնում է յանցաւոր առանց յանցանք գործելու:

Եթէ հին սերունդը ազատ է այս թերութիւնից, նրա ներկայութիւնը անշուշտ շատ մեծ օգուտ կարող է տալ ընտանիքին:

Ընթերցողի համար արգէն պարզ է մեր հայեացը ընտանիքի այն անդամների վերաբերամբ, որոնք նեղ մտքով ասած ընտանիքին չեն պատկանում: Դրանք կրթութեան գործում միայն ծնողների օգնականը կարող են լինել և ոչ աւելի: Ով այդ դերին չի յարմարում, նա գործ չունի երեխանների հետ: Երեխանների հետ գործ չը պէտք է ունենան և հիւրերը. յիմար ոռ-

վորութիւն է շարունակ փոքրերին կանչել ու ցոյց տալ հիւրերին, որոնք կարելի է իսկի չեն էլ հնտաքրքրուում երեխաներով, իսկ յաճախ կարող են և ահագին վաս տալ իրանց խօսքերովն ու ձևերովը։ Միայն նրանք, որոնք երեխաների սիրելի հիւրն են, որոնք սիրով խօսում են ու խաղում երեխաների հետ, միայն նրանք կարող են լինել մանուկների հետ։

Տան ծառաներին էլ երեխի հետ պէտք է թողնել միայն այն ժամանակ, եթէ մեր կատարեալ վստահութիւնն են վայելում։

Տան մէջ լինում են և չափանաս երեխաներ։ Նըրանք ընտանիքի օրինական անդամն են և փոքրիկների հետ կապւած արեան կապերով։ Ասելն աւելորդ է, թէ ինչ աստիճան ցանկալի է ընտանիքի լրիւ լինելը, երբ փոքրիկները բացի ծնողներից մեծ եղբայրներ ու մեծ քոյրեր էլ ունեն։ Նօրմալ ընդանիքում սրանք էլ օգնող ձեռքեր են մօր համար։ Մէկը երեխի շորերն է կարում, միւսը կարդալ է սովորեցնում, երրորդը խաղալիքներ է շինում և հէնց իր այս աշխատակցութեամբն էլ ցոյց է տալիս, որ ընտանիքը ապրում է ընդհանուր ու սերտ մի կեանքով։

X

Մի քանի ընդհանուր եղբակացութիւններ։

Մինչև հիմա ասածո եթէ ամփոփելու լինենք, կը հասնենք հետեւեալ մի քանի ընդհանուր եղբակացութիւնների։

Բնական ընտանիքը ներկայացնում է միասին կե-

նակցող մարդկանց մի խումբ, որոնք իրար բարիք են ցանկանում, պահում են իրար ու օգնում, վիշտն ու ուրախութիւնը կրում են միասին և աշխատում էլ են միասին կեանքը աւելի լաւ ու աւելի թեթև զարձնելու համար։ Երեխաները ընտանիքի գլխաւոր անդամը չեն, ոչ էլ երկրորդական, այլ նրա հաւասար անդամը։ Նըրանց աշխարհ գալովը կեանքի նոր շրջան է սկսում ընտանիքի մէջ։ Այսուեղ նորից պէտք է շեշտել, որ երեխաները ստիպում են, որ մենք խիստ լինենք դէպի մեզ մեր երեխաների, մեր ծառաների, մեր ազգականների ու իրար հետ ունեցած մեր փոխագարձ յարաբերութիւնների ժամանակ։ Ճիշտն են ասում, թէ ուրիշն կրթելով՝ մենք ինքներս ենք կրթում, երեխաների ներկայութիւնը յաճախ մի սանձ է գաւնում մեր շուայլութեանն ու անսանձութեանը, պահանջում է աւելի խոհականութիւն ու աւելի աշխատանք, որպէս զի ընտանիքի կեանքում քիչ աւելի կարգ ու կանոն մտնի, ու կարողանանք բաւարարութիւն տալ ընտանիքի նիւթական ու հոգեկան բազմատեսակ պահանջներին։

Երեխան աշխարհը է գալիս բոլորովին անօգնական և մեծ խնամքի ու հոգատարութեան պէտք ունի. և վարժելով ամեն բան իր ծնողներից ստանալու՝ ընականօրէն նրանց վրա նայում է ինչպէս իր յենարանի ու իր զեկավարի վրա։ Ու երեխի մէջ առաջ է զալիս սէր, սիրելու պահանջ, ծնողների գերազանցութեան զգացումը, մի տեսակ հպարտութիւն նրանցով, այլ և այն գիտակցութիւնը, թէ ծնողները իրաւունք ունեն իր վրա։ Անմիտ մարդը միայն կարող է մտա-

ծել, թէ երեխաները իրանց խաղերից դուրս ուրիշ բանով չեն հետաքրքրում: Մինչդեռ նրանք գիտում են շարունակ իրանց շրջապատը, դիտում են խաղալիս, խօսելիս, կազրիզներ անելիս, նկատում են յաճախ դէմքի արտայայտութիւնները և իրանց խելքով բացարութիւններ են տալիս: «Մայրիկ չան, գլուխդ է ցաւում», հարցնում է երեխան, երբ մայրը տխուր նստած է հօր հետ ունեցած տեսարանից յետոյ: Յանդիմանել են մեծ քրոջը, որ լաց է լինում. այդ արցունքները շարժում են երեխի գութը, մօտ է գալիս, բարձրանում է քրոջ գիրկը ու համբուրում նրան, որ միսիթարի: Վաղուց նկատւած բան է, որ երեխաները հիանալի կերպով որոշում են, թէ ով է իրանց սիրում և ով ոչ: Նրանք շատ սիրալիր են իրանց բարեկամների հետ ու գրա են ընկնում անվերջ հարցերով ու խնդիրներով, մինչդեռ միշտ հեռու են փախչում երեխայ չը սիրողներից: Քիչ-քիչ սկսում են մարդկանց դատել, որոշում են՝ ով է բարի, ով է չար, և այն թէ ով լաւ հեքիաթներ է պատմում, ով ամեն բան գիտէ, ով ամեն բան կարող է: Սա միայն իրողութեան հաստատում չէ, այլ և գնահատումը, այսինքն թէ այս ինչ յատկութիւնը լաւ է, այն ինչը վատ. և այդ գնահատումն էլ սիշտ լինում է քիչ չափազանցրած՝ «ամեն բան գիտէ», «ամեն բան կարող է»: Պարզ է, որ այս գնահատութեան ամենից աւելի ենթարկում են նըրանք, ովքեր ամենից աւելի մօտ են երեխաներին, և ընականօրէն ծնողները ամենից աւելի էլ հաւանականութիւն ունեն ամենաբարձր գնահատման արժանա-

նալու, չէ որ նրանք այնքան առաւելութիւններ ու իրական արժանաւորութիւններ ունեն երեխաների, ծառաների ու միւսների հետ համեմատած: Ծնորհիւ այն հանգամանքի, որ երեխան ծնուռում է անօգնական, որ ամեն խնամք ստանում է իր ծնողներից, որ իր զարթնող հոգու բոլոր պահանջներին իր ծնողներն են բաւականութիւն տալիս, հետգիտակ այն փոքրիկ եսականից, ինչպիսին լինում է նոր ծնւած երեխան, գուրս է գալիս մի էակ, որ սիրում է ու երեխայօրէն յարգում այն ամենքին, որոնք ջերմութիւն են տալիս իր մանկութեանը: Կենսագրութիւնների ու գեղարւեստական երկերի մէջ յաճախ է յիշում, որ շատ երեխաների հոգում լինում է այն դառն գիտակցութիւնը, թէ իրանց ոչ ոք չի սիրում, և կամ շատ քիչ են սիրում: Կարող է պատահել, որ այլտեղ չափազանցութիւն կայ ու քիչ էլ եսականութիւն, այսինքն իրանց քիչ է թւում, ինչքան էլ սիրուն, բայց յամենայն դէպս այսքանը պարզ է, որ մեծ պահանջ ունեն սիրելու ու սիրւելու, և ոչ միայն իրանց հասակակիցներից, այլ և մեծերից:

Եթէ գեռ մարդ կարող է ապացոյցի կարիք զգալ ցոյց տալու համար, որ երեխաները սկսելով եսականութիւնից շատ վաղ անց են կենում որդիական սիրոյ, գոնէ երկար խօսելու իսկի կարիք չը կայ ծնողական սիրոյ վերաբերմամբ: Ամեն կասկածից վեր է այդ սէրը և գրանից է ծնւռում ծնողական հպարտութիւնը: Բոլոր մայրերը իրանց երեխաների մէջ զարմանալի ընդունակութիւններ, տաղանդներ ու արժանիքներ են գտնում ամեն օր: Ծնողական այս սէրն ու հպարտու-

թիւնը եթէ նոյն իսկ չափազանցրած էլ լինի, դրա հիմքը գոնէ բոլորովին ընական է: Ամեն մի գործ, որի վրա մարդ իր հոգին է դնում, շատ թանկ արժէք ունի առաւել եթէ այդ գործը մարդկային կենդանի հոգու կրթութիւնն է:

Այս սէրն ու հպարտութիւնը, նաև այն յոյսը, թէ երեխաները մեծանալով մեր օգնականն են լինելու և մեր ծերութեան նեցումն ու միաթարութիւնը, թեթեւցնում է ծնողների բեռը, նրանց քաշած զրկանքները ու դժւարութիւնները: Այդ դժւարութիւնների թւում, մենք մասնաւորապէս շեշտում ենք իրան հսկելու անհրաժեշտութիւնը: Կրթել չի նշանակում գեղեցիկ խրատներ տալ, այլ մարդավարի ապրել ու իր կեանքովը օրինակ ցոյց տալ: Ով ուզում է որ կատարի իր պարտքը երեխաների հանդէպ ու նրանց հոգում բարի յիշատակ թողնի, թէ աշխարհքում ինչպէս պէտք է ապրել, նա պէտք է նախ սկսի իր կրթութիւնից: Նա կարող է կեանքի շատ յարմարութիւններից զրկի երեխին, տայ միայն մի թեթև ուսում, ինքը կարող է լինի դիւրաբրոք բնաւորութեան տէր, բազմաթիւ թերութիւններ կարող է ունենալ, այդ բոլորը չի վնասի իր բարի յիշատակին, եթէ արի է եղել վորձութեան օրերին, եթէ աշխատել է ինքն իրան աղնւացնել, եթէ բարեխիղճ կատարել է իր պարտաւորութիւնները և բարի է եղել դէպի ուրիշները:

Գալով ընտանեկան պառակտումներին ու ընդհարումներին, նրանց ազգեցութիւնը շատ մեծ է երեխի վրա, ոչ միայն երբ ինդիրը մեծ չափեր է ստանում,

այլ նոյնիսկ առօրեայ մանր կոիւներն ու վէճերը, առօրեայ մանր բժախնդրութիւնն ու բոլոր միւս պըստիկ ընտանեկան անբնականութիւնները. այդ բուորը շատ վատառողջ սնունդ է երեխի համար, որ չի կարողանում այդ մարսել ու մտնում է կեանք բարոյապէս հիւծւած, ինքն էլ դառնում է այն հազարաւորներից մէկը, որոնք առանց ներքին պայքարի ու տարակոյսների, կեանքի կոիւն են մղում իրար հետ ու չարչարում իրար և կամ ընդհակառակը՝ անտարբեր է դառնում դէպի այդ կոիւը, արհամարհում է մարդկանց ու չի հաւատում բարու գոյութեանը:

Նօրմալ կրթութիւնը կարող է լինել միայն նօրմալ ընտանիքում: Խսկ նօրմալ ընտանիքը ապրում է սիրով, քանի որ մարդիկ հէնց նրա համար են միասին եկել, որ իրանց կեանքի պակասը իրարմով լրացնեն: Ամեն մէկը ունի իր գործը, մէկը միւսին չի խանգարում, այլ ընդհակառակը թեթեացնում է ինչով կարող է: Ընտանեկան կեանքը ստեղծում է ընդհանուր շահեր, ուր կարող է լինել տարբեր հասկացողութիւն, բայց ոչ տարածայնութիւն, ընդհանուր շահեր, որոնց իրազործելիս ոչ պատւասիրութեան տեղ կայ, ոչ գլխաւորութեան, այլ փոխագարձ խորհրդի ու օժանդակութեան: Ընդհանուր է վիշտն ու ուրախութիւնը, դըժքախտութիւնները տանում են միասին, ու աշխատանքին յաջորդում է հանգիստը, զրոյցն ու ուրախ ժամանցը: Եթէ անցել է արգէն սիրոյ հրայրը, մնում է մի ուրիշ սէր, սովորոյթ սէրը և մասնաւանդ փոխագարձ յարգանքը: Երեխաները ընտանիքի ուրախութիւնն են

ու յոյսը: Նրանք ունեն իրաւունքներ, և այդ իրաւունքներից առաջինը՝ երեխայ լինելու իրաւունքն է: Նրանց սխաներն ու յանցանքները դատապարտում են, միայն ոչ անսիրտ կերպով: Կեանքը հոսում է սիրով ու խաղաղ: Մանուկը յարգում է և իր կողմից ճանաչում է մեծերի իրաւունքը, սէրը սիրով է փոխանակում, յարգանքը՝ յարգանքով: Ահա նօրմալ ընտանիքը:

Նօրմալ ընտանիքում տեղ չունի նաև այն, ինչ որ ծնողական եսականութիւն անւանեցինք: Այդ եսականութեան ծայրայեղ ձեւերը հաւանօրէն դատապարտում են շատերը, բայց աւելի մեղմ ձեւերը մնում են աննկատելի, որովհետեւ ծնողական եսականութիւնը, ինչպէս երկում է, սաստիկ տարածւած երկոյթ է: Օրինակ, ես համարում եմ ինձ լաւ մարդ, գոնէ պատճառ չունեմ վատ համարելու, ուրեմն ինչպէս չը ցանկած, որ իմ որդիս էլ ինձ նման լաւ մարդ լինի: Ես դրական խելքի տէր մարդ եմ, որից և շատ օգուտ եմ տեսել կեանքի մէջ, և ասողը գլխի տէր լինելու համբաւ եմ վայելում, իսկ որդիս դուրս է եկել ինչոր մի երեակայող, սիրում է հէրիաթներ, ոտանաւորներ և հէնց որ սկսում է պատմել, իսկոյն վառում է երկարակյութիւնը: Ես բացսիրտ մէկն եմ ու մարդամօտ, ամենքին մի ամսորժելի, մի քաղցր խօսք եմ ասում, իսկ որդիս մարդու երես տեսնել չի ուզում, վրայից սառնութիւն է փչում և մեծանայ թէ չէ՝ ամենքի երեսին ուղղակի ասելու է. «ասացեք ինչ որ տսելու էք, ձեզ եետ գլուխ դնելու ժամանակ չունեմ»: Ես կեանքո

անց եմ կացրել մեծ խնայողութեամբ, հաշւել եմ ամեն մի կօպէկը և միայն դրա շնորհիւ է, որ այժմ կարողութեան տէր եմ գարձել, իսկ որդիս, կարծես, չի էլ հասկանում, որ ամեն մի իր աշխատանք արժէ. ձեռքը մի բան ընկաւ թէ չէ՝ իսկոյն նւիրում է կամ բաժանում, իրան ոչինչ չի պահում. այդ տեսակ անհաշիւ ապրելով կեանքի մէջ ոչինչի չես տիրանայ: Ի՞նչպէս չաշխատեմ որ որդիս իմ նման լինի:

Երեխաներին իր նման ու իր ճաշակին դարձնելու ձգտումը շատ յաճախ կոիւ է առաջացնում և աւելորդ վշտեր է պատճառում թէ ծնողներին և թէ երեխաներին, և ընդհանրապէս ոչ մի հետեանքի էլ չի համում: Բնութիւնը չես ծոփ, և վերջապէս ծոխ էլ, ի՞նչ օգուտ: Շատ նեղ մտածմունք է, թէ ինչոր ինձ բաւականութիւն կամ նոյնիսկ բախտաւորութիւն է բերել, ամենքին էլ նոյն բախտաւորութիւնը կը բերի: Բախտաւորութիւնը վերին աստիճանի անհատական բան է և հնարաւոր է միայն այն պայմանով, որ մարդ ինքն իրան հաւատարիմ մնայ: Ի՞նչ որ մարդու որտովն է, մարդ լաւ է անում, զարգացնելով իր ընական ուժերն ու հակումները.

Բայց յաճախ այս հարցը անց է կենում բարոյականութեան հողի վրա, թէ ինչպէս են երեխաները վարւելու իրար հետ ու մեծերի հետ, և այս գէպքում, ի հարկէ, ծնողների միջամտութիւնը աւելի տեղին է: Բայց հէնց այստեղ էլ երբէք չը մոռանանք, որ պէտք է շատ զգուշ լինենք և մանաւանդ բարոյակա-

Նութեան էութիւնը չը շփոթենք նրա մի որհէ արտաքին ձևականութեան հետ:

Ճառ գնահատելի ու ցանկալի է, որ ծնողները հաստատ բարոյական համոզումների տէր լինեն. բարոյական համոզումը և մարդկանց ինքնուրոյնութիւննը իրար չեն հերքում, մանաւանդ երբ զանազան սովորութիւնները ջոկում ես բարոյականութեան պահանջներից: Բարոյական համոզումը այս կշիռն է, որով դատում ենք թէ մեղ, թէ ուրիշներին: Նա չի հարթում ու նմանեցնում ամենքին, նա չի սպանում բնաւորութիւնները, այլ գալիս միանում է բնազգի ճայնին, խղճին ու մարդու անմիջական զգացմանը և ինքն էլ իր կողմից ամենը գնահատման ենթարկելով՝ ուժեղացնում կամ թուլացնում է դատավճիռը: Բարոյապէս համոզած մարդը երեխի ինքնուրոյնութեանը ձեռք չի տալիս, այլ իր խօսքովը գրդում է նրան, որ մի նոր չափ էլ աչքի առաջ ունենայ իր հոգու շարժումները գնահատելիս: Միայն չպէտք է սպասէք, որ նա նէնց իսկոյն կըմրոնի ու կենթարկի ձեր չափին: Իր ասածի վրա մտածելը, իր վարմունքի ուրիշների վրա թողած տպաւրութիւնը աչքի առաջ ունենալը, մի խօսքով՝ ինքն իրան քննելն ու տիրելը հեշտ բան չէ և ձեռք է բերում միայն առարիների ընթացքում:



«Ազգային գրադարան»



NL0228640

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը—
Հիսուսի վերնիցի թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.
II Երեխայի բունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսի-
ցեանի 15 կ.
III Երեխայի ազատութիւնը, կ. Հ. Վեհանցելի, + Մե-
ծերն ու փոքրերը—տիկ. Խաչակիսինի, թարգմ.
Ստ. Լիսիցեանի 15 կ.
IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնը ու կըր-
թութիւնը—կ. Ելնիցկու, թարգմ. Մ. Աղ. Ի
Ստ. Լ. 15 կ.
V Պարգևներն ու պատիժները ընտանեկան դաստիա-
րակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—
Գալանդառուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի. Ծա-
նօթացրէք կեանքի ծագման հետ—Տիկ. Սելմերի,
թարգմ. Ստ. Լ. 15 կ.
VII Ընտան. դաստիարակութեան նպատակներն և հի-
մունք. —Պ. Կապտերնի, թարգմ. Միս. Աս. 15 կ.
VIII Ինչ. է հետաքրքրում և զարգացնում մանկան—
Ակսէլ Արստալ թարգ. Ստ. Լիսիցեանի 15 կ.
IX Մանուկների աշխատանքն ընտանիքում. 15 կ.
X Տղան և աղջիկը անցողական շրջանում Բուլ և նել-
սէն. 10 կ.
XI Մանկան ազատութիւնն ու ուրախութիւնը, Օտտօ
Երնստ. 20 կ.
XII Ժողովրդական մանկական խաղեր, խմբագրեց
Ստ. Լիսիցեան 20 կ.
XIII Ընտանեկանյարաբերութիւններն ու նրանց կրթիչ
նշանակութիւնը Ա. Ն. Օստրոգորսկու, թարգմ
Լ. Շ. 20 կ.

Գիշն է 20 ԿՈՊ.

Ճանապարհածախոսը՝ 1 ո. ոչ պակաս գնողների հա-
մար խմբագրութեան վրա է՝ Տիֆլուս, Ռեժաւիա «Լուսեր».

50. 270